ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

15 հոկտեմբերի 2024 թվական

3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 12.30

Տիգրան Ավինյան

-Ավագանու հարգելի՝ անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 22 անդամ՝

Հայկ Միրզոյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Գրիգոր Իսկանդարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արշակ Սարգսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Մեսրոպ Մանուկյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Աննա Ավետիսյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Վահան Ավագյան՝ «Հանրային ձայն» խմբակցություն,
Արման Բաբաջանյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Իոսիֆ Կուբատյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Լուսինե Գևորգյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Անի Խաչատրյան՝ «Հանրապետություն» խմբակցություն,
Հայկ Գրիգորյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Ռոբերտ Ծովյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Արմեն Քոչարյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Արմենակ Դանիելյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Լուսինե Սարգսյան՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
Մանուկ Սուքիասյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Սուսաննա Մելիքյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Գևորգ Ստեփանյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,

Սամվել Հակոբյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Սամվել Հարոյան՝ «Մայր Հայաստան» խմբակցություն,
Տիգրան Պետրոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն,
Արամ Թորոսյան՝ «Ազգային առաջընթաց» խմբակցություն:

Տիգրան Ավինյան

Առաջին հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Հայկ Միրզոյան, խնդրեմ:

Հայկ Միրզոյան

-Շնորհակալություն, առաջին հարցը վերաբերում է տրանսպորտի բարեփոխումներին: Ցանկանում եմ ճշտել, թե ռեֆորմի ո՞ր փուլում ենք: Ավտոբուսների ու տրոյլեյբուսների նոր խմբաքանակն արդեն Երևանում է և սպասում ենք ավտոբուսների մյուս խմբաքանակին: Դա մոտավորապես ե՞րբ կլինի և երբ դրանք շահագործվեն, արդյոք հին «HIGER» մակնիշի ավտոբուսները շարունակելու են շահագործվել:

Երկրորդ հարցս վերաբերում է վերելակներին: Բավականին մեծ ծավալով վերելակներ փոխվեցին, բայց այս տարի հայտարարություն է արվել, որ որոշակի հասցեներում պետք է վերելակներ տեղադրվեն, սակայն այդ գործընթացն ինչ-ինչ պատճառներով դանդաղում է: Տարբեր առիթներով ինձ են դիմում բնակիչները: Վերջերս դիմել են Բաշինջաղյան փողոցի 2-րդ նրբանցքի հ.2 շենքի բնակիչները: Կցանկանամ իմանալ գործընթացն ի՞նչ փուլում է:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Ավտոբուսների ամբողջական ժամանումը կանխատեսում ենք մինչև ս.թ. հոկտեմբեր ամսվա վերջ: Դրանց մի խմբաքանակն արդեն Երևանում է: Ինչ վերաբերում է այս ավտոբուսների ժամանմամբ պայմանավորված՝ հին շարժակազմի փոփոխությանը, ապա տեղեկացնեմ, որ բազմիցս ասվել է՝ չնայած 171 նոր ավտոբուսի և 15 տրոյլեյբուսի ժամանմանը, շարժակազմի քանակի խնդիրը մնում է ակտուալ: Այդ պայմաններում, տրանսպորտային ցանցի շրջանակներում, որոշում է կայացվել որոշակի չափով «HIGER» մակնիշի ավտոբուսները փոխարինել, որովհետև դրանց շահագործման ժամկետն անվերջ չէ, սակայն շարժակազմի հնարավորինս քանակ գծերում ապահովելու հրամայականից ելնելով՝ որոշակի քանակ մնալու է:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը:

Արսեն Կարոյան

-Տեղեկացնեմ, որ այս տարվա ծրագրի շրջանակներում նախատեսվում է փոխարինել 500 վերելակ, որից 384-ն արդեն իսկ գտնվում են հասցեներում: Դրանցից 191-ի

վերաբերյալ ՀՀ ՆԳՆ անվտանգության կենտրոնի դրական եզրակացությունը ստացվել է, որից 154-ն արդեն իսկ գտնվում են շահագործման փուլում: Մնացածի վերաբերյալ ընդունման-հանձնման գործընթացը շարունակվում է: Տեղեկացնեմ նաև, որ 20 վերելակ այս պահի դրությամբ գտնվում է ճանապարհին, մնացած 94-ն արդեն իսկ պահեստավորված են և մոտակա շաբաթվա ընթացքում կտեղափոխվեն հասցեներ: Վստահաբար տեղեկացնում եմ, որ այս տարվա ընթացքում նախատեսված 500 վերելակն ամբողջությամբ կտեղադրվի սահմանված ժամկետների շրջանակներում:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյան, խնդրեմ:

Գրիգոր Իսկանդարյան

-2024թ. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված ծրագրով նախատեսված է Դավթաշեն վարչական շրջանում իրականացնել վերանորոգման աշխատանքներ: Մենք եղել ենք հասցեներում. Դավթաշեն 4-րդ փողոց 10-րդ տուն՝ 538.000 դրամ՝ աշխատանքները կատարված չէ, Դավթաշեն 4-րդ թաղամաս 17 շենք բն. 30՝ 569.000 դրամ՝ աշխատանքները կատարված չէ, Դավթաշեն 3-րդ թաղամաս 6-րդ հանրակացարան, բն. 3՝ 639.000 դրամ՝ աշխատանքները կատարված չէ: Քաղաքացիները տեղեկացրել են, որ 4 տարի է արդեն խոստանում են ու ոչինչ չեն անում: Արդեն հոկտեմբեր ամիսն է և տարին ավարտվում է, ինչու՞ դեռ ոչ մի աշխատանք կատարված չէ:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն, պարոն Իսկանդարյան: Քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչությունը կզբաղվի այս հարցով և հաջորդ շաբաթ կներկայացնի զեկույց:

Գրիգոր Իսկանդարյան

-Երկրորդ հարցը հնչեցնեմ. Դուք ասում եք, որ 52 կմ ասֆալտապատման աշխատանքներ են իրականացվել: Կարո՞ղ եք ասել կատարված ասֆալտապատման աշխատանքներից քանի կմ-ն է, որ նույն վայրում կրկնակի է իրականացվել: Դա չի վերաբերում «Վեոլիա ջուր» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունների կողմից քանդված և վերականգնված հատվածներին: Դա վերաբերում է նրան, երբ կոնկրետ 1քմ կամ 5քմ փոսն ասֆալտապատում են, հետո նոր ասֆալտապատած տարածքը քանդում են՝ ավելի մեծ չափով ասֆալտապատում: Ի դեպ այդ նույն փոսը կրկին քանդվում է: Հստակ հասցեն նշեմ՝ Լեռ Կամսարի փողոցի հ.30/3 շենքի դիմաց: Ես անձամբ եղել եմ այնտեղ, ասֆալտապատում են իրականացրել մի քանի փոքր կտորներով, հետո կրկին քանդել են ու կրկին ասֆալտապատել ու կրկին քանդվել է: Այն, որ ես խոսում եմ տեխնիկական հսկողությունից, խնդրում եմ նաև այդ մասով պատասխան տրամադրեք և նաև ասացեք, թե 52կմ-ից որքա՞նն է կրկնակի արվել, որքանի՞ օգտակար գործողության գործակիցն է 0:

Տիգրան Ավինյան

-Պարոն Իսկանդարյան, բոլոր այն փողոցներում, որտեղ նախատեսված է եղել նորոգման աշխատանքներ, այդտեղ որևէ գումար Երևանի քաղաքապետարանը դրանից առաջ չի ծախսել: Տարբեր փոսալցումներ իրականացնող ընկերություններ, ոչ հիմնարար, ուղղակի ժամանակավորապես խնդիր լուծելու տրամաբանությամբ, փոսային որոշակի նորոգումներ են իրականացրել, որի համար Երևանի քաղաքապետարանը չի վճարել:

Բոլոր այն հասցեներում, որտեղ իրականացվում են միջին նորոգման աշխատանքներ, նույնիսկ կարող է փոսային նորոգման աշխատանքներ իրականացված լինեն 1, 2 կամ 3 վայրում: Այնուամենայնիվ, միջին նորոգման ծավալը մի համեմատենք մի քանի փոս լցնելու ծավալի հետ: Միջին նորոգման աշխատանքները լրիվ ուրիշ որակի և բովանդակության աշխատանքներ են: Դրանք ֆրեզավորման աշխատանքներ են, որոնցով ամբողջապես նոր շերտ է քերվում և փռվում: Հետևապես, այս ծավալի մեջ կարող է մի քանի փողոց եղել է: Չեմ բացառում, որ այդպիսի դեպքեր եղել են, բայց, այնուամենայնիվ, դա մասսայական բնույթ չի կրում:

Երևան քաղաքում կոմունիկացիաների /էլեկտրաէներգիայի, ջրի, գազի և այլ/ ամբողջական պատկերը այս տարի բոլոր գործընկերների հետ համատեղ փորձում ենք տեղադրել GIS քարտեզների վրա: Ասեմ ավելին՝ հաջորդ տարի Երևանի քաղաքապետարանը պլանավորում է գնել Lidar համակարգեր, որոնցով գետնի տակ եղած կոմունիկացիաները նկարվելու, արձանագրվելու են և հնարավոր է լինելու աշխատանքները պլանավորել ավելի տեղեկացված: Սրանք գործընթացներ են, որոնք տեղի են ունենում: Ես կրկին անգամ ասում եմ, որ եթե կոնկրետ դեպքեր կան, ինձ գրավոր ներկայացրեք, ես կուսումնասիրեմ:

Գրիգոր Իսկանդարյան

- Լեռ Կամսարի փողոցի հ.30/3 շենքը, որ ես նշեցի, դա միակ դեպքը չէ, կա նաև դեպք Ուլնեցու փողոցի վրա և Արաբկիր վարչական շրջանի այլ հասցեներում: Այն նկարները, որ ես ներկայացրեցի, դրանք սխեմատիկ հատակագծեր են, քաղաքապետարանի փաստաթղթեր, որոնց հիման վրա կատարողական են գրում ու Դուք վճարում եք: Ինձ ասում են, որ բավականին երկար ժամանակ է պետք, որ այդ փաստաթղթերը կարողանան ունենալ:

Խնդրում եմ պատասխանեք տեխնիկական հսկողության վերաբերյալ ի՞նչ է արվել:

Տիգրան Ավինյան

-Պարոն Իսկանդարյան, տեխնիկական հսկողության հետ կապված օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն կա: Դա ոչ միայն մեզ է պետք, այլ ամբողջ երկրին: Առավել մանրամասն տեղեկատվություն կներկայացնի քաղաքապետի խորհրդական Սոնա Թևանյանը:

Սոնա Թևանյան

-Աշխատանքներ են տարվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ, օրենսդրական փոփոխություններն ամբողջականացնելու և միասնական նույն տրամաբանության մեջ իրականացնելու համար: Դեռ չափորոշիչների մշակման փուլն է:

Տիգրան Ավինյան

-Տիկին Թևանյան, խնդրում եմ երկշաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն գործընթացի վերաբերյալ:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արշակ Սարգսյան, խնդրեմ:

Արշակ Սարգսյան

-Հարցս Երևանի մանկական երկաթուղու վերաբերյալ է: 1935թ. Երևանի մանկական երկաթուղու կառուցումը ԽՍՀՄ պետական պլանով ներառվեց 1936թ. ժողովրդատնտեսական պլանի մեջ՝ Երևանի մանուկներին տալով գեղեցիկ, ընդարձակ ամեն տեսակ հարմարություններով մանկական հանգստի և մշակութային պարկ: Այսօր այնտեղ միայն ավերակ վիճակ է: Երկաթուղին չնչին գումարի դիմաց տրվել է վարձակալության, սակայն վարձակալի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորություններից գրեթե ոչ մեկը չի կատարվել՝ ո՛չ այգու պահպանումը, ո՛չ բարեկարգումը, էլ չխոսենք արդիականացումից: Նշեմ, որ 10 տարով կնքված վարձակալության ժամկետը մի քանի ամսից ավարտվում է, բայց բազմիցս հնչեցրած բացթողումների, անմխիթար վիճակի, բարեկարգումների և նույնիսկ հիմնանորոգումների վերաբերյալ ոչ մի խոսք, ոչ մի քայլ իշխանության կողմից չի եղել:

Ցանկանում եմ իմանալ՝ ինչո՞ւ բարձրաձայնված խնդիրներին հետևողական չեք, արդյոք որևէ քայլ իրականացրել եք տվյալ պայմանագրի շրջանակներում, ո՞վ է պատասխանատու պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման համար, ո՞վ պետք է վերահսկեր և ե՞րբ եք երեխաների մանկության այգին հիմնանորոգված, բարեկարգված և արդիականացված վերադարձնելու երեխաներին:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն, պարոն Սարգսյան, շատ կարևոր հարցի համար: Ուզում եմ տեղեկացնել, որ վարձակալի կողմից բազմիցս առաջարկություններ են եղել ներդրումային ծրագրի իրականացման վերաբերյալ: Փաստացի այդ բոլոր ներդրումային ծրագրերը, որոնք առաջարկվել են՝ մերժվել են և՛ Երևան համայնքի կողմից, և՛ ՀՀ կառավարության: Մերժման պատճառը եղել է այն, որ հիմնականում ներդրումային ծրագիրը կենտրոնացած է եղել հյուրանոցային համալիր կառուցելու ծրագրի վրա, որի սպասարկման գոտում նաև պետք է հայտնվեր այգու մնացած հատվածը: Միգուցե սա հետաքրքիր առաջարկ կլիներ մեկ այլ վայրի համար: Սակայն Հրազդանի կիրճի նկատմամբ ձևավորվել է նոր մոտեցում, մասնավորապես՝ կիրճին համայնքային պարկի կարգավիճակ տալու ուղղությամբ

իրականացվել են աշխատանքներ: Վերջինիս շրջանակներում քաղաքապետարանի կողմից Հրազդանի կիրճի տարածքն ամբողջությամբ գույքագրվել է և ՀՀ կառավարության որոշմամբ տրվելու է նոր կարգավիճակ:

Հարցի մասին պարզաբանում կներկայացնի նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Սիրարփի Հայկազյանը, խնդրեմ:

Սիրարփի Հայկազյան

-Պարոն քաղաքապետ, այժմ իրականացվում են օրենսդրական փոփոխություններ և եթե աշխատանքները հասցնենք, միգուցե և ավագանու որոշմամբ հնարավոր կլինի Հրազդանի կիրճին համայնքային ենթակայության բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ տալ:

Տիգրան Ավինյան

-Այսինքն օրենսդրական փոփոխություններից հետո ամենայն հավանականությամբ Երևանի ավագանու լիազորությունների շրջանակում ավագանու կողմից դիտարկվելու է Հրազդանի կիրճին համապատասխան կարգավիճակ տալու վերաբերյալ հարցը:

Պարոն Սարգսյան, Դուք ճիշտ եք նշում, որ պայմանագրի ժամկետը լրանում է և երբ պայմանագրի ժամկետն ավարտվի, հաշվի առնելով նոր կարգավորումները, ունենալու ենք բաց առաջարկների մրցույթ: Երևանի մանկական երկաթուղու վերաբերյալ նոր սահմանափակումների տրամաբանությամբ ընդունելու ենք առաջարկներ: Այն սահմանափակումները, որոնք նախանշվել են և այն առաջարկները, որոնք իրականացվել են վարձակալի կողմից՝ ուղղակի եղել են անհամատեղելի և այդ պատճառով բոլոր առաջարկները մերժվել են:

Արշակ Սարգսյան

-Պարոն Ավինյան, իսկ ինչու՞ ենք սպասում տվյալ տարածքի պայմանագրի ժամկետի ավարտին, երբ վարձակալները չեն կատարում պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները: Ինչու՞ չենք դադարեցնում պայմանագիրը: Ու՞մ կողմից պետք է վերահսկվեր այդ ընթացքը, որպեսզի պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման պարագայում վարձակալի հետ պայմանագիրը դադարեցվեր:

Տիգրան Ավինյան

-Կարծում եմ այդ հարցի պատասխանը Դուք կարող եք ստանալ, եթե գրավոր դիմեք և ստանաք պայմանագրի օրինակը: Կարծում եմ պայմանագրի օրինակում հիմնական «խութերն» են: Վարձակալին՝ պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը պարտավորեցնելու աշխատանքները շատ էներգիա և դատական գործընթաց են պահանջում, և սպասելով այդ ժամանակի ավարտին ուղղակի դրանից կխուսափենք: Այսինքն այն էներգիան, որը պետք է սպառենք այդ վեճի վրա, ուղղակի կսպառենք նոր պայմանագրային հնարավորություններ ստեղծելու վրա և «բաց» միջավայրում նոր ներդրողներից կստանանք առաջարկություններ:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյան, խնդրեմ:

Մեսրոպ Մանուկյան

-Պարոն քաղաքապետ Դուք հայտարարել եք, որ Երևան քաղաքում 200-ից ավել բակ եք բարեկարգել: Վարչական շրջանների ղեկավարներն ինձ ներկայացրել են ընդամենը 103 հասցե՝ ֆուտբոլի դաշտերն ու բակերը միասին: Եթե Դուք 200 բակ եք բարեկարգել, ապա վարչական շրջանների ղեկավարներն ի՞նչ թվեր են ինձ ներկայացրել:

Նույն տրամաբանության շարունակությամբ՝ նամակ եմ գրել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին՝ հարցումով թե քանի՞ ավտոբուս է անհրաժեշտ, որպեսզի արժանապատիվ ծառայություն մատուցենք քաղաքացիներին, քաղաքապետարանը պատասխանել է՝ 1000-1200: Դուք հրապարակում եք, որ Իլ Դը Ֆրանսի շրջանային խորհրդի մասնագետների կարծիքով 150 ավտոբուսն էլ, հնարավոր է բավարար լինի: Եթե այդ մասնագետները Երևան չեն եկել ու չեն ուսումնասիրել, այդ թիվը ինչպե՞ս են հաշվել:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցի վերաբերյալ ես հերթով կբարձրաձայնեմ բոլոր բակերը.

1.Բաբաջանյան փողոցի հ.22 շենքի բակ,

2.Անդրանիկի փողոցի հ.75 շենքի բակ,

3.Բաբաջանյան փողոցի հ.115 շենքի բակ,

4.Անդրանիկի փողոցի հ.76 շենքի բակ,

5.Բաբաջանյան փողոցի հ.43 շենքի բակ,

6.Շերամի փողոցի հ.115 շենքի բակ,

7.Օհանովի փողոցի հ.6 շենքի բակ,

8.Արցախի պողոտայի հ.14 շենքի բակ,

9.Աթոյան անցուղի հ.9 շենքի բակ,

10.Աթոյան անցուղի հ.10 շենքի բակ,

11.Մահարու փողոցի հ.127 շենքի բակ,

12.Աթոյան հ.15 շենքի բակ,

13.Սարի թաղի 7-րդ փողոց հ.66 մանկապարտեզի ետնամասում գտնվող այգի,

14.Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/3 շենքի բակ,

15.Ավանեսովի փողոցի հ.2/1 շենքի դիմացի բակ,

16.Նուբարաշենի խճուղի հ.5/3 շենքի բակ,

17.Նուբարաշենի խճուղի հ.5/5 շենքի բակ և այլն:

Մրցույթով դրվածներին էլ դեռ կանդրադառնամ: Պարոն Մանուկյան, իսկ Դուք քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունից ստացե՞լ եք պատասխան:

Մեսրոպ Մանուկյան

-Պարոն քաղաքապետ, երբ ես գրություն եմ գրում քաղաքապետին, խիստ հանձնարարական տվեք բոլորին, որ պատշաճ պատասխաններ տրամադրեն, որ չստացվի քաղաքապետը ստել է:

Խնդրում եմ երկրորդ հարցիս պատասխանեք՝ ավտոբուսների վերաբերյալ:

Տիգրան Ավինյան

-Պարոն Մանուկյան, եթե Դուք ուշադիր եք եղել գործակարգավարական խորհրդակցությանը՝ ես ասել եմ տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանին, որ դեռևս ամբողջապես չենք ուսումնասիրել ֆրանսիացիների առաջարկը և մեր ծրագրերը դեռևս նախորդ 250 ավտոբուսով է պայմանավորված: Եթե մենք համոզվենք, որ գործող 60 գծի փոխարեն Իլ Դը Ֆրանսի շրջանային խորհրդի առաջարկած 40 գիծը և 250 ավտոբուսի փոխարեն 150 ավտոբուսը կբավարարի, մենք այդպես կանենք:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Աննա Ավետիսյան, խնդրեմ:

Աննա Ավետիսյան

-Առաջին հարցս հնչեցնեմ. Նորք-Մարաշ վարչական շրջանում հ.21 մանկապարտեզի մի հատված 1995-1996թթ. տրամադրվել է «Փարոս» հիմնադրամին՝ այդ շրջանում օգնություն բաժանելու համար: Այնուհետև այնտեղ գործել է սոցիալական ծառայություն: Սակայն գրեթե 4 տարի է այդ հատվածը չի օգտագործվում՝ այն դեպքում, երբ մանկապարտեզում կա 32 գրանցված երեխա, ովքեր չեն կարողանում հաճախել, քանի որ տեղ չկա: Անձնակազմը դիմել է վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ, քաղաքապետարան և անձամբ Ձեզ, պարոն Ավինյան, բայց ոչ մի արձագանք դեռ չի ստացվել: Ի՞նչն է խնդիրը, ինչու՞ այդ հատվածը չի վերադարձվում մանկապարտեզին և վերջապես ե՞րբ կվերադարձվի, որ այդ 32 երեխան կարողանան հաճախել:

Երկրորդ հարցը՝ անդրադառնամ աղմուկ բարձրացրած «Էրեբունի-Երևան» տոնակատարության շրջանակներում 70 մլն դրամ արժողությամբ 16 երգերին: Ուզում եմ հասկանալ ի՞նչ տրամաբանությամբ եք այդ որոշումը կայացրել, ի՞նչ է շահել այդ նորացված ձայնագրություններով երևանցին, այն դեպքում, երբ մեր քաղաքում չլուծված խնդիրները շատ-շատ են: Օրինակ՝ հենց կոյուղատար համակարգը, որին 1մլրդ 823մլն դրամ հատկացրել եք, բայց արդյունքն այդպես էլ չի երևում, քաղաքն անմխիթար վիճակում է, նաև շենքերի տանիքները: Եղանակներն էլ այժմ տեղումնառատ են և բնակիչների մոտ մղձավանջ է շուտով սկսվելու, երբ անձրևաջրերը լցվեն վերևի հարկի բնակարաններ: Այդ գումարով կարծում եմ կարելի էր գոնե մեկ հասցե նորոգելով շատ ավելի քաղաքի ու բնակչի հանդեպ հոգատարության դրսևորում ցուցաբերել, քան եթե իրենք լսեն այդ նորացված ձայնագրություններով երգերը: Ի դեպ նշեմ, որ ոլորտի տարբեր ներկայացուցիչների կարծիքները համատեղելով, այդ գումարը, որ տրամադրել եք ձայնագրությունների

գործընթացին, մի քանի անգամ գերազանցված են իրական արժեքներից: Ինչո՞վ եք առաջնորդվել այս որոշումը կայացնելիս:

Տիգրան Ավինյան

-Նախ անդրադառնամ այն հարցին, որ ասում եք 1 մլրդ 823 մլն դրամ կոյուղու փոխարինման ծրագրի վրա ծախսում ենք, սակայն մարդիկ դա չեն նկատում: Անդրադառնամ այն հասցեներին, որտեղ քաղաքապետարանը խնդիրը լուծել է և ուզում եմ հատուկ շեշտել, որ Երևանի քաղաքապետարանը երբևէ այս ծավալներով հարցեր չի լուծել: 14 կմ կոյուղագիծ է փոխվել և 2-րդ տարին է, որ այսպիսի բացառիկ ծրագրեր են իրականացվում: Երբ անընդհատ համեմատականներ ենք փորձում տանել մշակութային ծրագրերի և կոյուղու կամ ասֆալտի միջև, ուզում եմ վստահ շեշտել, այդ ամենն արվում է բոլոր վարչական շրջաններում: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում Միքայելյան փողոցի հ.2-28 շենքերի կոյուղին է փոխարինվել, հ.68 տնից մինչև Սվաճյան փողոց Ա3 թաղամաս հ.23 շենքի կոյուղին է փոխարինվել, Վեգների փողոցի՝ Մելիքյան փողոցից, Օհանովի փողոցից մինչև Անդրանիկի և Օհանովի փողոցների խաչմերուկ, Էրեբունի, Ավան, Շենգավիթ և մյուս բոլոր վարչական շրջաններում իրականացվել են կոյուղագծերի փոխարինման աշխատանքներ՝ աննախադեպ մեծ ծավալների: Հնարավոր է, որ խնդիրներ լինեն, բայց, հարգելի գործընկերներ, եկեք մշակութային միջոցառումները, կոյուղու հետ չհամեմատենք: Խնդրում եմ նաև, որ մշակութային միջոցառումներն այն կոնտեքստում նայենք, որ տոները կարողանանք միասնական տոնենք՝ մի կողմ դնելով մեր քաղաքական հայացքները:

Երևանի հ.21 մանկապարտեզի մասին հարցին կպատասխանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավար Միքայել Օհանյանը:

Միքայել Օհանյան

-Նորք-Մարաշ վարչական շրջանի հ.21 մանկապարտեզում, այո՛, կա խնդիր: Տարածքը ժամանակին հանձնվել է «Փարոս» ծրագրի իրականացման համար և մենք գրությամբ դիմել ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որպեսզի վերադարձնենք տարածքը և կարողանանք ավելացնել խումբ: Սակայն, իրավական խնդիրներ ունենք, քանի որ միջազգային ծրագրի շրջանակներում է կազմվել պայմանագիրը՝ պետք է սպասենք պայմանագրի ժամկետի ավարտին: Այժմ միջոցներ ենք ձեռնարկում այլ տարբերակներով լուծելու մանկապարտեզում հերթերի հարցը:

Տիգրան Ավինյան

-Իսկ ի՞նչ ժամկետ է նշված պայմանագրում:

Միքայել Օհանյան

-Ժամկետը եղել է երկար, սակայն հաջորդ տարի ավարտվելու է:

Տիգրան Ավինյան

-Պարոն Օհանյան, կազմակերպենք քննարկում, հասկանանք միգուցե հնարավոր է գործընկերների հետ պայմանավորվել և լուծել հարցը:

Հաջորդ հարցը՝ «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյան, խնդրեմ:

Վահան Ավագյան

-Պարոն քաղաքապետ, հիշեցնեմ, որ նախորդ նիստում իմ հարցին չեք պատասխանել: Այդ մասին ես նաև բարձրաձայնել եմ ս.թ. սեպտեմբերի 19-ին՝ Պետրոս Ղազարյանի մոտ կայացած հարցազրույցի ժամանակ: Շինթույլտվություն տալու ժամանակ հաշվի առնում են արդյոք «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Վեոլիա ջուր» և մյուս ընկերությունների հզորությունները:

Ծարավ Աղբյուրի փողոցի հ.134/4 շենքի բնակիչներից ստացել ենք բազմաթիվ խնդիրների մասին լուծման առաջարկներ: Սեպտեմբեր ամսվա կեսերին շինթույլտվության ժամկետը երկարացվել է, բայց ոչ մի շարժ չկա: Ձեզ հետ այդ մասին խոսել եմ և ուզում եմ իմանալ ի՞նչ է լինելու այդ շենքի բնակիչների հետ: Այս նոր տարում բնակիչները կմտնեն իրենց բնակարանները՝ 2-3 տարի սպասում են: Այդ կոնտեքստում առաջարկում եմ ստեղծել սև ցուցակ՝ անբարեխիղճ շինարարների համար, որ իրենց ընդհանրապես շինթույլտվություն չտրամադրվի և այդ ցուցակը կարող եք սկսել «Մաստեր շին» ՍՊ ընկերությունից, որն այդ շենքի կառուցապատողն է:

Երկրորդ հարցը հնչեցնեմ. այս մանկապարտեզներում և դպրոցներում բավականին շատ կոնֆլիկտներ են առաջանում՝ նոր տնօրեններ նշանակելու ընթացքում: Ես ուզում եմ հիշեցնել, որ նոր տնօրեններ նշանակելու համար անցկացվում են ատեստացիաներ, նախկին տնօրենները չեն անցնում այդ ատեստացիան, անհաղորդակցություն է ստեղծվում դպրոցի նախկին ու երկար ժամանակ աշխատած ուսուցիչների հետ: Ուզում եմ նշել, որ նախկիների ժամանակ էլ էին տնօրեններ փոխվում, բայց այսպիսի խնդիրներ չէր առաջանում: Ուզում եմ հասկանալ՝ միգուցե «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն արտահերթ ընտրությա՞ն է պատրաստվում, որ տնօրենների փոփոխության այսպիսի տեղատարափ է: Հաշվի առնելով, որ չեն կարողանում ուսուցիչների հետ պատշաճ աշխատանքային հարաբերություններ ստեղծել, ուստի դպրոցի կառավարումը ևս չեն կարող իրականացնել:

Տիգրան Ավինյան

-Շինարարության վերաբերյալ բարձրաձայնած Ձեր հարցի մասով, հայտնում եմ, որ կառուցապատողը համաձայնեցված նախագծով ունի պարտավորություններ՝ քաղաքի և բնակիչների նկատմամբ՝ նրանց շահերը պաշտպանելու առումով: Մասնավորապես՝ եթե շինարարը նախագծով ունի կանաչապատման տարածք, որը պարտադիր պետք է իրականացվի, ապա պարտադիր պետք է կանաչապատ տարածքի ծրագիրն իրականացվի, հակառակ դեպքում քաղաքապետարանը հնարավորություն չի ունենում ավարտական ակտ տրամադրել:

Բողոքը երկու կողմ ունի՝ բողոքող բնակիչները հիմնականում ասում են, օրինակ՝ նախագծից շեղում է տեղի ունեցել: Ավտոմատ կերպով, տրամաբանական է դառնում, թե

ինչու Երևանի քաղաքապետարանը չի տրամադրել ավարտական ակտ, շահագործման թույլտվություն: Բողոքի երկրորդ հատվածը, որը նաև կրկին հասկանալի բողոք է, վերաբերում է, թե ինչքա՞ն ժամանակ պետք է տևի շինարարությունը, ինչքա՞ն ժամանակ ունի կառուցապատողը ծրագիրն ավարտին հասցնելու համար:

Պարոն Ավագյան, ավագանու կողմից ընդունված որոշումներով, որոնք վերաբերվել են շինթույլտվությունների երկարաձգումներին, տուրքեր և վճարներ սահմանելուն, դրանց շրջանակներում երկարաձգման այնպիսի էական ժամկետներ, վճարների չափեր ենք սահմանել և հասկացել ենք, որ մեծաքանակ կառուցապատողներ կարող են ուղղակի սնանկանալ, որը կբերի մեծ խնդրի: Այժմ փուլային այդ արտոնությունների ծավալը կարծում եմ նվազացնելու ենք:

Կառուցապատողը մի հնարավորություն ունի՝ մեկ անգամ կարող է դիմել ժամկետը երեք ամսով անվճար երկարաձգելու, եթե վստահ է, որ երեք ամսվա ընթացքում ավարտին է հասցնելու ծրագիրը: Եթե վստահ չէ, որ երեք ամսում է ավարտելու՝ կարող է դիմել ավելի երկար ժամկետով երկարաձգելու, որի համար պետք է վճարում կատարի, որովհետև եթե սկզբում երեք ամսով անվճար ժամկետի երկարաձգում է ստացել, հետագայում արտոնությունն այլևս չի գործելու:

Ես կարծում եմ ավագանին բավականին լավ կանոնակարգել է այս իրավիճակը, այսինքն՝ ընթացիկ տարում ունենք խնդիրներ, հաջորդ տարի միգուցե ունենալու ենք խնդիրներ, բայց տարեց տարի այս կանոնակարգումների շնորհիվ խնդիրները նվազելու են:

Երևանի քաղաքապետարանը պարտավոր է տալ ավարտական ակտ այն դեպքում, երբ նախագծից շեղումները ոչ էական են: ՀՀ կառավարության որոշման մեջ հստակ նշված է, թե որոնք են ոչ էական շեղումները: Բոլոր այն դեպքերում, երբ էական են շեղումները՝ քաղաքապետարանն ուղղակի հնարավորություն չունի տալու ավարտական ակտ: Դա գալիս է առաջին հերթին այդ բնակիչների շահերից: Շուտ ավարտական ակտ տալու դեպքում ուղղակի իրավիճակ կարող ենք ստեղծել, որ ոչ ամբողջական և էական շեղումներով նախագիծն ավարտին հասցվի: Այսինքն՝ մաքսիմալ այս քաղաքականությունն այս ձևով ենք պահելու, մնացյալ բոլոր առումներով, վստահ եղեք, ավագանին արդեն իսկ ոլորտը բավականին խիստ կանոնակարգել է:

Վճարների համար են նախատեսված շինթույլտվությունների երկարաձգումները, դրանք էական են և այսինքն՝ կառուցապատողներն իրապես մտածելու տեղ ունեն՝ այն առումով, որ բոլորը նախագծերը ժամանակին ավարտին հասցնեն: Այդ դեպքի վերաբերյալ երկու հակասող նշում եք անում: Նախագծից շեղում կա, ասում ենք կառուցապատողին, որ կառուցապատումն ավարտին հասցնի՝ ըստ նախագծի: Ավարտական ակտ չենք տալիս, որովհետև պետք է նախագծից շեղումներն էական չլինեն: Սա է ընդհանուր բնույթը:

Պարոն Ավագյան, տնօրենների վերաբերյալ չգիտեմ կոնկրետ ինչ դեպքի մասին եք ասում: Ես 2018թ. պարբերաբար՝ տարբեր դեպքերով, տնօրենների նշանակումների հետ

կապված արձանագրել եմ, որ կան խնդիրներ, բայց այնուամենայնիվ սա նույնպես կարծում եմ բնական գործընթաց է: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը նոր ձևաչափ է սահմանել, թե ինչ չափորոշիչների պետք է բավարարեն տնօրենների թեկնածուները: Այն թեկնածուները, ովքեր որ ստանում են համապատասխանաբար սահմանված չափորիշներով դրական եզրակացություններ, նրանք պոտենցիալ կարող են նշանակվել տնօրեն: Ովքեր չեն ստանում՝ ունեն հնարավորություն կրկին վերահանձնելու, բայց ես կարծում եմ տնօրեն նշանակելուց մեր խնդիրը բացարձակապես երբևէ քաղաքական չի եղել և չի էլ լինելու: Միանշանակ առաջին հերթին հետևում ենք այն չափորոշիչներին, որոնք տրված են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Հետևապես, այո՛, կարող է որևէ տնօրենի շատ սիրում ենք, բայց եթե նա սահմանված չափորորոշիչներով չի հաղթահարում մրցութային փուլը, ապա հնարավորություն չի տրվում նրան տնօրեն կամ տնօրենի պաշտոնակատար նշանակել:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արման Բաբաջանյան, խնդրեմ:

Արման Բաբաջանյան

- Պարոն քաղաքապետ, նախկինում Երևանի քաղաքապետարանի կայքէջում՝ քարտեզի վրա երևում էին շինթույլտվությունները:

Արդյոք հնարավոր է տարածատեղեկատվական GIS միասնական համակարգի նոր քարտեզները հանրության համար դարձնել հասանելի, որպեսզի շինթույլտվությունները բոլորի համար լինի տեսանելի:

Որոշակի խնդիրներով պայմանավորված, կառուցապատողներին ավարտական ակտեր չտրամադրելու պատճառները (թերություններ, նախագծի շեղումներ) ևս հրապարկել, քանի որ ուշացման դեպքերի համար կառուցապատողները քաղաքացիներին ուղղորդում են քաղաքապետարան: Այդ դեպքում գնման իրավունք ձեռք բերած քաղաքացիները կիմանան, որ գործընթացը երկարաձգվում է կառուցապատողների պատճառով:

Երկրորդ հարցը. Երևան քաղաքում օդի աղտոտվածության և փոշու կանխարգելման դեմ կատարվում են որոշակի գործողություններ: Մեքենաների (այդ թվում՝ անսարք) արտանետումներն էականորեն աղտոտում են քաղաքի օդը:

Արդյոք կարող է մայրաքաղաքում ծուխ արձակող և անսարք մեքենաների համար նոր օրենքի մշակման շրջանակում որևէ լիազորություն սահմանել Երևանի ավագանու կամ քաղաքապետարանի կողմից:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Բաբաջանյան, պատասխանեմ 2-րդ հարցին.

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի նոր նախագծում լիազորող նորմերն արդեն իսկ առկա են: Նախագիծն ընդունվելու

դեպքում, ոչ միայն այդ ոլորտում, այլև փոշու, աղմուկի, այլ արտանետումների հետ կապված, Երևանի ավագանին կունենա նոր և մեծ ծավալի լիազորություններ՝ այդ հարցերը կանոնակարգելու համար:

Ինչ վերաբերում է տարածատեղեկատվական GIS միասնական համակարգում շինթույլտվությունները դիտարկելու Ձեր հարցադրմանը, տեղեկացնում եմ, որ այս պահի դրությամբ ունենք պիլոտային՝ տրված շինթուլտվությունները և նվազագույնը 2D ձևաչափով հողատարածքը տեսնելու հնարավորություն, որը դեռևս չի հրապարակվել: Հետագայում, բոլոր շինթույլտվությունները տրամադրելու ժամանակ, ճարտարապետներից կպահանջենք 3D մոդելներ, որը կերևա GIS քարտեզի տվյալ շերտի վրա: Քաղաքաշինական խորհուրդը փաստացի որոշումները կկայացնի GIS քարտեզի քննարկման շրջանակներում, որը հնարավորություն կստեղծի փաստացի տեսնել միջավայրը և ծավալներն այդ քարտեզի վրա:

Հավելյալ տեղեկատվություն կներկայացնի «Երևանի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Սարգիս Մանուկյանը:

Սարգիս Մանուկյան

-Ուզում եմ տեղեկացնել, որ մինչև տարածատեղեկատվական GIS միասնական համակարգը ներդնելը, www.yerevan.am կայքում մի քանի տարի է շինարարական և նախագծման թույլտվությունները տեղադրվում են և հրապարակային են: Դրանք Google քարտեզի վրա է, որն առաջիկայում նախատեսում ենք անցկացնել GIS քարտեզ:

Տիգրան Ավինյան

-Տարբերությունը և փոփոխությունը կայանալու է նրանում, որ շրջանակների փոխարեն հողատարածքների վրա հստակ կտեսնենք թե քանի քառակուսի մետրի վրա ի՞նչ ծավալի շինարարության թույլտվություն է տրված:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Իոսիֆ Կուբատյան, խնդրեմ:

Իոսիֆ Կուբատյան

-Պարոն Ավինյան, Դուք քիչ առաջ ասացիք, որ ընդդիմադիր ավագանու բոլոր անդամների բարձրաձայնած խնդիրների հետևից անձամբ գնալու եք, բայց լավ կլինի առաջին հերթին գնաք Ձեր նախընտրական խոստումների հետևից: Խոսքը գնում է Ծարավ Աղբյուրի փողոցի մանկապարտեզին: 2023թ. սեպտեմբերին, բնակիչների հետ նախընտրական հանդիպման ժամանակ, Դուք հայտարարել եք, որ մոտ մեկ ամսից սկսվելու է մանկապարտեզի շինարարությունը: Այս մեկ տարվա ընթացքում մի քանի հարցում եմ արել, որոնց պատասխանից հասկացվում է, որ մոտ ժամանակում չի սկսվելու շինարարական աշխատանքները, քանի որ հողատարածք են փնտրում, կամ ջրագիծ են գտել ու չեն կարողանում նախագիծ կազմել և այլն: Ուզում եմ ասել, որ կարող եք համատեղել այդ երկու գործընթացը և այս խնդրի հետևից գնալ:

Երկրորդը՝ երբ ասում եք, որ 100-200 բակ եք բարեկարգել, ես Ձեզ հրավիրում եմ Կիևյան փողոցի հ.4 շենքի բակ, որը բարեկարգվել է և կտեսնեք, թե ինչ վիճակում է այդ բարեկարգված բակը: Պետք է կանաչապատվեր, ոռոգում լիներ, որոնք չեն արվել, խաղահրապարակը կիսաավեր վիճակում է, լույսերը չեն աշխատում և այսպես շարունակ:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցին կպատասխանի Ավան վարչական շրջանի ղեկավար Վահե Հակոբյանը:

Վահե Հակոբյան

-Այս պահի դրությամբ աշխատանքները նախագծման փուլում են, արդեն 5060մ Երևան համայնքի անունով գրանցվել է: Այնտեղ խնդիր կա՝ այդ հողամասով 600մմ-անոց ջրագիծ է անցնում, նախատեսվում է մեծ մանկապարտեզ կառուցել: Այս պահին առաջարկվել է 6 խումբ ունեցող, բայց քանի որ այդքան հողատարածքը բացազատել ենք ու հատկացրել ենք մանկապարտեզի կառուցմանը, ուզում ենք 10 խումբ ունեցող մանկապարտեզ կառուցել, որպեսզի մոտավորապես 300 երեխա կարողանա հաճախի մանկապարտեզ: Խնդիրը դա է հիմնականում, ջրի հարցը երբ լուծենք 10 խումբ ունեցող մանկապարտեզի տիպային օրինակը կտեղակապենք հողամասի հետ, որից հետո կբացազատվի կողքի՝ մոտ 3000քմ հողամասը ևս:

Տիգրան Ավինյան

-Պարոն Կուբատյանն իրականում շատ տեղին և թիրախային հարցի է անդրադարձել և ես ուզում եմ այս հարցին նաև ավելացնել մյուս 4 նոր կառուցվելիք մանկապարտեզի քննարկումը՝ Կորեայի ձորի, Նոր Խարբերդի, Կիլիկիայի մանկապարտեզները և Երազ թաղամասին հարակից հ.24 մանկապարտեզը: Այս մանկապարտեզների վերաբերյալ հանձնարարվում է քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանին, իրատեսական ժամկետներով, երկուշաբթի օրը ներկայացնել զեկույց:

Երկրորդ հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Խոսքը վերաբերում է Կիևյան փողոցի հ.հ.2, 4, 6, 8 հասցեների բակային տարածքին: Այնտեղ նախագծի հետ կապված որոշակի խնդիրներ ենք ունեցել, ընդհանուր առումով ասեմ, որ այո՛, աշխատանքները հետաձգվեց, բայց բոլոր առաջացած խնդիրներին փուլ առ փուլ կարողացանք լուծում տալ: Կար խնդիր լուսավորության հետ կապված, բայց կարողացանք շինարարին պարտավորեցնել սեղմ ժամկետում շինարարական աշխատանքները կրկին իրականացնի՝ նորմերին համապատասխան: «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից արդեն աշխատանքն ընդունվել է և այժմ շահագործվում է: Նոր խնդիրների մասին ես տեղյակ չեմ, եթե կան խնդիրներ, խնդրում եմ ինձ տեղեկացրեք: Բոլոր աշխատանքներն իրականացվել են ըստ նախագծի, սակայն ուզում եմ նշել, որ յուրաքանչյուր տարի նախագծերի վրա աշխատում ենք, արդիականացնում ենք և

նախագծային թերությունները հաշվի ենք առնում՝ հետագայում բակեր վերանորոգելու նախագծերում:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հովհաննիսյան, խնդրում եմ նոր կառուցվող մանկապարտեզների մասով երկու շաբաթը մեկ ներկայացնել զեկույց:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Լուսինե Գևորգյան, խնդրեմ:

Լուսինե Գևորգյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, հարցս վերաբերում է քաղաքապետարանի աշխատակազմի զանգերի սպասարկման և աջակցման բաժնին.

Այսօր քննարկվեց քաղաքապետարանի աշխատակազմի զանգերի սպասարկման և աջակցման բաժնի հաստիքացուցակը, ես ունեմ առաջարկ.

Տարիներ առաջ փորձ եմ ունեցել աշխատել հեռախոսազանգերի կենտրոնում: Ընդդիմադիր մեր գործընկերներն առաջարկեցին շաբաթ և կիրակի օրերին, աշխատանքային ժամերի ավարտից հետո հնարավորություն ընձեռնել քաղաքացիներին կապ հաստատել բաժնի աշխատակցի հետ: Քանի որ լինում են տարբեր դեպքեր՝ ծառեր կտրելու կամ անհապաղ արձագանք պահանջող դեպքեր, ուստի կարելի է նույնիսկ այդ գործընթացը կազմակերպել հեռավար՝ աշխատակիցը տանից արձանագրի հեռախոսազանգերը:

Առաջարկում եմ ստեղծել հաճախ ստեղծվող հարցերի շտեմարան, որը կտեղադրվի Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքէջում և քաղաքացիներին հնարավորություն կտրվի իրենց հարցի պատասխանը գտնել այդ շտեմարանից:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Լիլիթ Յավրյանը:

Լիլիթ Յավրյան

-Տեղեկացնում եմ, որ քաղաքապետարանի աշխատակազմի զանգերի սպասարկման և աջակցման բաժինը շաբաթ և կիրակի օրերին նույնպես աշխատում է: Չնայած փորձում ենք ապահովել աշխատակցի աշխատանքային 40-ժամյա ռեժիմը, դրա փոխարեն շաբաթվա ընթացքում մեկ օր նախատեսելով հանգստի համար: Շաբաթ և կիրակի օրերին և ոչ աշխատանքային ժամերին քաղաքացիները հնարավորություն ունեն քաղաքապետարանի աշխատակազմի զանգերի սպասարկման և աջակցման բաժին թողնել ձայնային հաղորդագրություններ: Հաջորդ օրը՝ առավոտյան, ձայնային հաղորդագրությունը վերծանվում է և սահմանված տեղեկատվությունը մուտքագրվում է համակարգ:

Ներկայումս համայնքային ծառայությունը կանոնակարգող օրենսդրական դաշտը և ներքին կանոնակարգը սահմանում է, որ աշխատակցի աշխատանքային ժամը սահմանված է ժամը 09.00-ից մինչև 18.00-ն և չի դիտարկվել ժամը 18.00-ից հետո աշխատելու փորձ, կարծում եմ դա կարելի է հետագայում քննարկել: Պետք է նշեմ, որ այստեղ օգնության է հասնում «Ակտիվ քաղաքացի» հարթակը, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին 24-ժամյա ռեժիմով Երևանի քաղաքապետարան ինֆորմացիա փոխանցել: Այդ տեղեկատվությունը հնարավորինս շտապ փոխանցվում է կատարողներին: Շաբաթ և կիրակի օրերին, ժամը 17.00-ից հետո կարելի է «Ակտիվ քաղաքացի» հարթակի միջոցով ցանկացած տեղեկատվություն փոխանցել Երևանի քաղաքապետարան:

Տիգրան Ավինյան

- Հաջորդ հարցը՝ «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-Պարոն քաղաքապետ, արդյոք շարունակական է լինելու քաղաքային իշխանության կողմից վերջին ժամանակահատվածում որդեգրած այն քաղաքականությունը, որ Երևանի քաղաքապետարանում և քաղաքապետարանի ենթակայության հիմնարկներում այն աշխատակիցները, որոնք խնդիրներ ունեն և՛ աշխատանքային կոլեկտիվի, և՛ աշխատանքի, և՛ աշխատակազմի հետ, կշարունակվեն հեռացվել աշխատանքից: Օրինակ՝ այն աշխատակիցները, որոնց հեռացումից հետո ամբողջ կոլեկտիվը գալիս է քաղաքապետարան և ոլորտը համակարգող համապատասխան պատասխանատուներին հայտնում է շնորհակալություն:

Տիգրան Ավինյան

-Այո՛, տիկին Խաչատրյան, այդ քաղաքականությունը չի փոխվում:

Խոսքը վերաբերում է իրապես վատ աշխատանքի մասին և հուսով եմ խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ աշխատակցի աշխատելաոճը բոլորի «քիմքին» համապատասխան չէ, քանի որ յուրաքանչյուրիս համար առաջին խնդիրն արդյունք տալն է:

Անի Խաչատրյան

-Երկրորդ հարցը. պարոն քաղաքապետ, անձը, ով հեռացվել է աշխատանքից, որի համար աշխատանքային կոլեկտիվը հայտնել է շնորհակալություն, ասեկոսեներ կան, որ պատրաստվում եք կրկին վերականգնել նույն ավիամոդելային դպրոցի փոխտնօրենի հաստիքում:

Արդյոք դա համապատասխանում է իրականությանը:

Տիգրան Ավինյան

-Տիկին Խաչատրյան, ես դպրոցի փոխտնօրեն և տնօրեն նշանակելու լիազորություն չունեմ: Այդ լիազորությունը վերապատվիրակել եմ վարչական շրջանի ղեկավարին:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան, խնդրեմ:

Հայկ Գրիգորյան

-Առաջին հարցս վերաբերում է բազմաբնակարան շենքերի համալիրների կառուցապատումների նախագծերին, այդտեղ նախատեսված ընդհանուր օգտագործման տարածքներին, որոնք նախագծի սկզբում լինում են ուրիշ ձևաչափով, իսկ կառուցապատումից հետո՝ մեկ այլ: Ցանկանում եմ հստակ պարզաբանում լինի՝ արդյոք կառուցապատողն իրավասու է ընդհանուր օգտագործման հողերի մակերեսի մեջ փոփոխություն իրականացնի, այդ թվում մեկ տարբերակ՝ առանձնացնի և օտարի, երկրորդը՝ ավելի պակաս կանաչապատի կամ բակային հատվածներ նախագծի և կառուցի, քան ի սկզբանե նախատեսված էր:

Հաջորդ հարցը Քանաքեռ-Զեյթուն ծննդատան աշխատակիցներին վերջնահաշվարկ չտալու վերաբերյալ է: Այս հարցի հետ կապված որոշակի նյութեր կարդացել եմ մամուլում: Ուզում եմ հստակ իմանալ՝ այստեղ խոսքը վերաբերում է մի շարք աշխատակիցներին վերջնահաշվարկ չտալու՞ն, թե կա նաև այլ զարգացումներ, մասնավորապես՝ այդ ծննդատունը հանձնվել էր հավատարմագրային կառավարման, չարաշահումներ էին գտնվել և այլն: Այս մասով ուզում եմ հասկանալ ի՞նչ է սպասվում այս աշխատակիցներին:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Գրիգորյան, Քանաքեռ-Զեյթուն ծննդատունը հանձնված է եղել հավատարմագրային կառավարման և վերջերս է հանձնվել Երևանի քաղաքապետարանի ենթակայությանը:

Առավել մանրամասն պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանը:

Դավիթ Կարապետյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, այսօր քաղաքապետարան էին եկել նաև Քանաքեռ-Զեյթուն ծննդատան աշխատակիցները՝ իրենց վերջնահաշվարկները տրամադրելու պահանջով: Ցանկանում եմ հայտարարել, որ Երևանի քաղաքապետարանը, նրանց վերջնահաշվարկների հետ կապված, որևէ պարտավորություն չունի: Սկսած այն պահից՝ 2020թ., երբ Քանաքեռ-Զեյթուն ծննդատունը հանձնվել է հավատարմագրային կառավարման, մինչև 2020թ. բոլոր վերջնահաշվարկները փոխանցվել է Քանաքեռ-Զեյթուն ծննդատանը, թե աշխատակիցներին ի՞նչու վերջնահաշվարկ չեն տրամադրել՝ Երևանի քաղաքապետարանի կողմից սկսվել է իրավական գնահատական տալու գործընթաց:

2020թ. Քանաքեռ-Զեյթուն ծննդատունը համատարմագրային կառավարման է հանձնվել, 2021թ., արդեն իսկ չկատարելով իր բոլոր պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը հանձն է առել ստիպելու կատարել իրենց պարտավորությունները:

Այնուհետև 2021թ., իրենց պարտավորությունները չկատարելու պատճառով, տուգանվել են: 2022թ. ևս, մի քանի գրությունով, փորձել ենք պարտավորեցնել կատարել իրենց պարտականությունները: 2022թ. օգոստոսի 1-ին հավատարմագրային կառավարչի հետ պայմանագիրը միակողմանի խզվել է և գործը ստացել է դատական ընթացք:

2024թ. ապրիլի 29-ից Քանաքեռ-Զեյթուն ծննդատունը հավատարմագրային կառավարումից անցել է Երևանի քաղաքապետարանի ենթակայության: Նախաձեռնել ենք իրականացնել ներքին աուդիտ և գույքագրում, սակայն, համատարմագրային կառավարչի կողմից փաստաթղթեր չտրամադրելու պատճառով, ներքին աուդիտ և գույքագրում տեղի չի ունեցել:

Փորձել ենք իրականացնել արտաքին աուդիտ: Սկզբում համատարմագրային կառավարչի հետ եկել ենք համաձայնության, որ փաստաթղթերը կտրամադրվեն, այնուհետև հնարավորություն չեն տվել անցկացնել արտաքին աուդիտ՝ իրենց պարտավորությունների և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ: Իրականացված արտաքին աուդիտի արդյունքում տրվել է տեղեկանք՝ աուդիտի անհնարինության վերաբերյալ: Բոլոր փաստաթղթերը, գրությունները՝ նրանց չկատարած պարտավորությունների մասով և Երևանի քաղաքապետարանի վերջնահաշվարկների տեղեկանքներով ամբողջական փաթեթն ուղարկվել է հետագա իրավական գնահատական տալու:

Տիգրան Ավինյան

-Խնդրում եմ նշել այդ ընկերությունների ղեկավարների անունները:

Դավիթ Կարապետյան

-«ԴԵՎԻ ՍԱՆ» ՍՊ ընկերությունն է: Ներկայացել էր Քրիստինե Խուդավերդյանը, բոլոր գրություններն իր հետ է եղել: Նախկինում՝ այդ խզումից առաջ, իրենց կանչել ենք խորհրդատվության, սակայն չեն ներկայացել, ներկայացել է միայն հաշվապահը:

Տիգրան Ավինյան

-Պարոն Կարապետյան ճի՞շտ եմ հասկանում, որ կան նաև ինչ-որ ստվերային անձինք, ում անունները հիմա չեք տալիս:

Դավիթ Կարապետյան

-Այո՛:

Տիգրան Ավինյան

-Շատ լավ, եկեք հասկանանք ովքեր են այդ անձինք, իրենց անուններն էլ նշենք ու սկսենք զբաղվել իրենց այլ գործունեությամբ: Ես վստահ եմ՝ իրենք քաղաքում նմանատիպ այլ ծրագրեր նույնպես կունենան:

Դավիթ Կարապետյան

-Ցանկանում եմ նշել, որ մայիսից, երբ Քանաքեռ-Զեյթուն ծննդատունը վերադարձվել է Երևանի քաղաքապետարանի ենթակայությանը, բնականաբար, ծննդատունը չէր կարողանում իրենց աշխատանքով ստեղծված գումարով աշխատակիցների

աշխատավարձերը վճարել: Երևանի քաղաքապետարանը միջոցներ է ներդրել և աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են: ՀՀ առողջապահության նախարարությունը հուլիսին, չափորոշիչների վերաբերյալ 9 կետով կասեցրել է ծննդատան գործունեությունը: Երևանի քաղաքապետարանն օգոստոս ամսին աշխատակիցներին, ըստ Աշխատանքային օրենսգրքի, ուղարկել է հարկադիր պարապուրդի և վճարել է: Երևանի քաղաքապետարանն օգոստոս ամսվա հարկադիր պարապուրդի գումարը վճարել է, բայց մի մասը ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայության կողմից գանձվել է: Այս պահին ԴԱՀԿ ծառայության հետ փորձում ենք ճշտել, որպեսզի օգոստոս ամսվա գումարը ևս վճարվի:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, խնդրեմ:

Տարոն Մարգարյան

-Պարոն Գրիգորյան, կառուցվող շենքից բաժնային սեփականության առանձնացման և առանձին օտարման հետ կապված, համաձայն ներկայիս գործող խմբագրությամբ Քաղաքացիական օրենսգրքի կարգավորումների՝ Երևանի քաղաքապետարանին բնակիչների համաձայնությունն անհրաժեշտ չէ: Սակայն արդեն իսկ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է օրենքը, կատարվել են համապատասխան փոփոխություններ, որն ուժի մեջ է մտնելու 2025թ. հունվարի 1-ից:

Նման դեպքերը բացառելու նպատակով, այն դեպքում, երբ դա նվազեցնում է բաժնային սեփականություն հանդիսացող թե՛ հողամասը, թե՛շինության ընդհանուր օգտագործման տարածքը, նախագծի վերահամաձայնեցումը կարող է տեղի ունենալ բացառապես գնման իրավունք ձեռք բերած անձանց համաձայնությամբ: Այսինքն՝ հունվարի 1-ից այդ խնդիրը վերանալու է:

Ինչ վերաբերում է կանաչ տարածքի նվազեցմանը, ապա կանաչ տարածքի նվազեցումը, ներկայումս և հետագայում էլ, գործող կարգավորումների շրջանակներում թույլատրված է, եթե միայն սահմանաչափը կայանում է նրանում, որ այդ չափը չի կարող նվազել նորմով ամրագրված պարտադիր 40% կանաչապատման չափից: Այսինքն, եթե մարդն ի սկզբանե նախագիծը համաձայնեցրել է 60% և ընթացքում ցանկանում է այդ չափը նվազեցնել և դարձնել մինչև 40%, Երևանի քաղաքապետարանը նման նախագծի վերահամաձայնեցումը մերժելու իրավական հիմքեր չունի:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Ռոբերտ Ծովյան, խնդրեմ:

Ռոբերտ Ծովյան

-Շնորհակալություն, առաջին հարցս վերաբերում է մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայարանի հարակից գետնացման խանութներին, որոնք վարձակալի և

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության, այսինքն՝ Երևանի քաղաքապետարանի վեճի պատճառով կապարակնքվել են: Արդյունքում՝ այս մարդիկ մնացել են անգործ:

Ես այցելել եմ և զրուցել իրենց հետ: Ինձ ասել են, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության ղեկավարությունը խոստացել է, որ այդ հարցը շուտ կլուծի: Ցանկանում եմ այս մասով կոնկրետ տեղեկատվություն ստանալ, թե ի՞նչ է կատարվում և այդ մարդիկ ե՞րբ կկարողանան շարունակել աշխատել:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, խնդրեմ:

Տարոն Մարգարյան

-Պարոն Ծովյան, Ձեր նշած տարածքները ժամանակին «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության կողմից տրամադրվել են վարձակալության մասնավոր ընկերության, որի անունն այս պահին չեմ մտաբերում: Այդ ընկերությունը տարածքները տրամադրել է ենթավարձակալության: Վերջիններիս կողմից կառուցվել են այդ կրպակաշարները և շահագործվել են: Հետագայում՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության հետ վերակնքնվել է պայմանագիր՝ արդեն ենթավարձակալների հետ:

Ներկայումս այդ ընկերությունը դիմել է դատարան: Պատասխանող կողմը հանդիսանում է մետրոպոլիտենը և նշված ենթավարձակալները: Դատարանի կողմից կիրառվել է հայցի ապահովման միջոց և արգելվել է տնօրինել այդ կրպաքաշարերը, քանի որ դիմումատուն պնդում է, որ այդ գույքն իր կողմից է կառուցվել, ոչ թե ենթավարձակալների: Այդ կապարակնքման գործողությունները, հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից, իրականացվել է մոտ երկու շաբաթ առաջ: Ներկայումս մետրոպոլիտենի կողմից միջոցներ են ձեռնարկվում այդ հայցի ապահովումը վերացնելու ուղղությամբ: Երևանի քաղաքապետարանն, իր իրավասությունների շրջանակում, օժանդակում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերությանը:

Ռոբերտ Ծովյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս կարմիր գծերի և ավտոկայանատեղիների վերաբերյալ է:

Ես մի քանի փողոցների օրինակներով կթվարկեմ. Օրինակ՝ Խորենացու փողոցի՝ «Ոսկու շուկայի», «Գումի շուկայի» հարակից տարածքներ, «Ռոսսիա մոլ» առևտրի կենտրոնի հետնամասում նույնպես վատ վիճակ է տիրում: Այդտեղ կանգնած են մարդիկ, ովքեր կայանող մեքենաներից ապօրինի գումար են գանձում:

Սարյան փողոցի՝ «Հայ փոստ» ՓԲ ընկերությունից մինչև Թումանյան փողոց, նույնպես վատ վիճակ է, բայց այստեղ այլ խնդիր է: Մեքենաները կայանում են երկրորդ գիծ, որովհետև երկրորդ գիծ կայանելու տուգանքը ընդամենը 2800 դրամ է: Ինչու եմ նշում

ընդամենը, որովհետև Սարյան փողոցում սուրճը նույնպես 2800 դրամ է: Այդ պատճառով այդ մարդկանց համար խնդիր չէ այդտեղի կարմիր գծանշումով հատվածում կայանելու համար վճարել 2800 դրամ:

Վարդանանց փողոցի շինանյութի շուկայի մոտ կրկին կանգնած են մարդիկ, ովքեր կայանող մեքենաներից կրկին գանձում են ապօրինի գումարներ:

Պետք է նաև նշեմ. քանի որ «Վարդանանց» նորարական բժշկության կենտրոնի դիմաց աջից և ձախից մեքենաների համար շրջադարձի հնարավորություն կա, մինչև Սախարովի հրապարակ խցանում է լինում: Այս մասով Հանրապետության փողոցում՝ Վերնիսաժի շրջակայքում, նույնպես վատ վիճակ է:

Լեոյի փողոցում մեքենաները չգիտես ինչու թեք են կայանում և գծանշումը նոր է արված ու վարորդը մեխանիկորեն հանդիպակաց գոտիով է երթևեկում:

Ինչ վերաբերում է Արամի ու Բյուզանդի փողոցներին, որի մասին ես նշել էի նախորդ նիստում, Երևանի քաղաքապետարանի կողմից այդ հատվածում կարմիր գծանշում է արվել, բայց մեղմ ասած վիճակը վատացել է:

Մաշտոցի պողոտայից դեպի Արամի փողոց ընկած աջակողմյան հատվածում կա կարմիր գծանշում, որն ավելի նպատակահարմար կլիներ գծել ձախ կողմի վրա, որովհետև այդտեղ կայանման համար նախատեսված տեղեր կար: Նշեմ, որ այդ հատվածում նորից մարդիկ կան, որոնք կայանման համար բավական մեծ գումար են վերցնում /1000 դրամ/: Նույն խնդիրը վերաբերում է Բյուզանդի փողոցին: Ես կառաջարկեի, օրինակ՝ Արամի փողոցի միայն ձախ կողմում թույլատրվեր մեքենա կայանել և աջ մայթը լայնացնել, որովհետև այնտեղ մայթը ընդամենը 50 սմ է, քայլելը շատ դժվար է:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալություն պարոն Ծովյան, Դուք բարձրաձայնեցիք Արամի փողոցի հետ կապված Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող ծրագիրը: Առաջին հերթին պետք է մայթը լայնացնեն, այս մասով զբաղվում է Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը և մեքենաների կայանումը նույնպես թույլատրվելու է մի կողմում: Նախագծով մեքենաների կայանումը նախատեսված է միայն գրպանիկներում, մայթը լայնանալու է, տնտեսվարողների գործունեությանը չենք խոչընդոտելու: Պետք է խնդրեմ այս հարցի մասով պարզաբանումներ ներկայացնի նաև քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Պարոն Ծովյան, բարձրացված հարցի հետ կապված Երևանի քաղաքապետարանը 2 լուծում է առաջարկում: Առաջին լուծումը՝ ինչպես տեղյակ եք ճանապարհային երթևեկության կանոնների իրավախախտման արձանագրումն իրականացվում է ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից, սակայն ողջամտորեն հասկանալով, որ ոչ բոլոր իրավախախտումներն են հնարավոր հենց այդ պահին հայտնաբերել, քաղաքապետարանի կողմից առաջարկվել է նոր կարգավորում: Համաձայն այդ կարգավորման՝ այլ վարչական

մարմիններն իրավասություն են ունենալու մեկ այլ վարչական մարմինների փոխարեն կազմել արձանագրություններ և ըստ ենթակայության ուղարկել որոշում կայացնելու իրավասություն ունեցող վարչական մարմին, համապատասխան որոշման կայացման համար:

Եթե այս կարգավորումը տեղայնացնենք ճանապարհային երթևեկության խախտման համար, ապա նախատեսվում է, որ քաղաքապետարանի աշխատակիցները, այդ թվում՝ քաղաքապետարանի տեխնիկական միջոցներով՝ կարմիր գծերի տեսախցիկներով, քաղաքապետարանի ենթակայության ավտոբուսների տեսախցիկներով, քաղաքապետարանի աշխատակիցների կողմից շրջայցների ժամանակ տեսանկարահանված, լուսանկարահանված խախտումների հիման վրա կազմել արձանագրություններ և դրանք ուղարկել ոստիկանություն՝ համապատասխան վարչարարության իրականացման և տուգանքի նշանակման համար:

Երևանի քաղաքապետարանի կողմից առաջարկվող 2-րդ կարգավորումը հետևյալն է. ինչպես տեղյակ եք քաղաքապետարանն արդեն շուրջ երկու, երեք տարի ունի լիազորություն առանց համապատասխան թույլտվության կայանող շրջիկ առևտրի կետերը տարհանելու հատուկ պահպանվող տարածք: Անձամբ իմ կարծիքով քաղաքապետարանի տարհանման գործառույթն առանց որևէ խոչընդոտների և խնդիրների բարեհաջող կատարվել է: Ներկայումս նոր նախագծով առաջարկվում է այդ գործառույթի շրջանակն ընդլայնել: Ոչ միայն շրջիկ առևտրի կետերը, այլև ցանկացած տրանսպորտային միջոց, որը կայանված է ոչ սահմանված վայրում՝ ոստիկանության հետ զուգահեռ Երևանի քաղաքապետարանին հնարավորություն տրվի նման մեքենաները տարհանել հատուկ պահպանվող տարածք: Հատուկ պահպանվող տարածքը կստեղծվի, կկահավորվի և կշահագործվի քաղաքապետարանի կողմից: Այդ նախագծով Երևանի ավագանին բավականաչափ պարտավորություններով է ծանրաբեռնվում այդ ամբողջ կարգերը մշակելու, պահանջները սահմանելու հարցում:

Բնականաբար, Երևանի քաղաքապետարանի կողմից, առաջնահերթությունը կտրվի այն մեքենաների տարհանմանը, որոնք խոչընդոտում են քաղաքի բնականոն կյանքին: Այսինքն՝ կանգառներում, կանաչ տարածքներում, դալանների մեջ կայանած մեքենաները, որոնք խոչընդոտում են բնակիչների, քաղաքապետարանին պատկանող աղբատար մեքենաների շենքի բակ մուտք գործելուն: Ուստի, այդ նախագծի հնարավոր ընդունման դեպքում, հնարավորինս սեղմ ժամկետների ընթացքում, կարծում եմ Ձեր կողմից բարձրաձայնված հարցն արդեն ամբողջությամբ կլինի մեր գործառույթների շրջանակում և ամբողջությամբ կլուծվի:

Տիգրան Ավինյան

-Պարոն Ծովյան ցանկանում եմ նաև տեղեկացնել, որ երեկ այս մասով քննարկում է եղել Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ՆԳՆ-ի հետ:

Անդրադառնալով պարոն Մարգարյանի պատասխանի առաջին մասին, պետք է նշեմ, որ խոսքը վերաբերվելու է ոչ միայն նրան, որ քաղաքապետարանն իր սարքերով արձանագրելու և ուղարկելու է, այլ ամեն մարմին, համապատասխանաբար իր գործառույթների օգտվելու է մեկ ընդհանուր միասնական տեսալուսանկարահանման համակարգից: Այսինքն՝ քաղաքապետարանը կիսվելու է իր համակարգի հնարավորություններով ՀՀ ՆԳՆ մեր գործընկերների հետ, ենթադրաբար, իրենք էլ իրենց համակարգի հնարավորություններով՝ քաղաքապետարանի հետ: Այսինքն՝ ունենալու ենք մեկ ընդհանուր համակարգ և կառավարման վերլուծական նյութեր, որի վրա քաղաքապետարանն իր գործիքակազմն է կիրառելու, համապատասխանաբար ՀՀ ՆԳՆ էլ հնարավորություն է ունենալու կոնկրետ դեպքերում տուգանքները նշանակելու:

Երկրորդ լուծումը, որի մասին խոսեց պարոն Մարգարյանը, կարծում եմ ամենաարդյունավետ մեթոդն է քարշակների դիվերսիֆիկացիան, և պարտադիր չէ, որ հենց պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն անձամբ այդ տեղափոխությունն իրականացնեն:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմեն Քոչարյան, խնդրեմ:

Արմեն Քոչարյան

-Առաջին հարցս վերաբերում է տարբեր վարչական շրջաններում, մասնավորապես՝ Նոր Նորք, Ավան, Կենտրոն, Էրեբունի վարչական շրջաններում իրականացվող ասֆալտապատմանը, եզրաքարերին, դիտահորերին: Ասֆալտապատման համար 2024թ. բյուջեից հատկացված է 3 մլրդ 467 մլն դրամ, եզրաքարերի համար նախատեսված է՝ 176 մլն 500 հազ. դրամ:

Աշխատանքների իրականացումից հետո այդ եզրաքարերն ի՞նչ պետք է անենք, որոնք չի փոխվել: Մասնավորապես Ավան վարչական շրջանի Թամրուչի փողոցում մայթը բացակայում էր, եզրաքարերը քայքայված վիճակում էին, հեղեղատարերը խցանված են, դիտահորերի նիշերի չբարձրացնելը, որի համար նախատեսվել է 1մլրդ 823 մլն դրամ: Էրեբունի վարչական շրջանում, բազմիցս ասել եմ, դպրոցի դիմաց ասֆալտապատում չի եղել, անձրևային եղանակներն սկսվել են և երեխաները ցեխաջրերի միջով են դպրոց գնում կամ դուրս են գալիս ճանապարհի հանդիպակաց գոտի: Այս ամենի պատասխանն ո՞վ է տալու, ո՞վ է վերջնական ընդունում այս ամենը: Մեկ ամիս առաջ Կենդանաբանական այգու ճանապարհի վրա արձանագրել էի ասֆալտապատումից հետո դիտահորի փլուզման դեպք, հաջորդ օրը ժապավենով փակել են այդ հատվածը և մինչ օրս չեն կատարել աշխատանքը: Աճառյան փողոցի վրա բոլոր հեղեղատարները խցանված են, հեղեղատարների վերևի հատվածները՝ անորակ: Այդ անորակ թուջի վերահսկողությունն ո՞վ է իրականացնում, փոխելուց հետո երկրորդն է կոտրվում, երրորդը: Հիմնականում դրանք ուղղահայաց հեղեղատարներն են ու իմ կարծիքով թուջի որակից է կախված կոտրվելը: Դեպքերը մի քանիսն են:

Տիգրան Ավինյան

-Ձեր բարձրաձայնած հարցերը հիմնականում Երևանի քաղաքապետարանին չեն ուղղված, որովհետև իրականում ո՛չ կոյուղատարերի, ո՛չ հեղեղատարների, ո՛չ դիտահորերի հետ կապված Երևանի քաղաքապետարանը պատասխանատվություն չի կրում: Ելնելով իրավիճակից՝ շատ դեպքերում Երևանի քաղաքապետարանը ստիպված է նաև այդ ծրագրերն իրականացնել և դրա համար ֆինանսական միջոցներ նաև ներառել, ինչպես օրինակ վերջին 2 տարիներին կոյուղու համար է գումար նախատեսել՝ մոտ 14-15կմ փոխարինման կամ կառուցման համար:

Ինչ վերաբերում է կոնցեպտուալ լուծմանը, ապա դա իրականացվելու է առաջին հերթին «Վեոլիա ջուր» ընկերության հետ պայմանագրի դրույթների վերանայման շրջանակում, որն այս պահի դրությամբ շատ ակտիվ քննարկվում է, ակտիվ բանակցությունների փուլ է: Երևանի քաղաքապետարանն իր դիտարկումները հայտնել է և ես հուսով եմ, որ այս տարի կրկին կամբողջացվեն այդ բանակցությունները և կարծում եմ, որ առաջնահերթ, մոտավորապես 70 կմ կոյուղի պետք է փոխվի և մոտ 90կմ նոր կոյուղագիծ պետք է կառուցվի, քանի որ կապիտալ ներդրումների կարիք կա այդ համակարգերում: Մենք ասել ենք, որ Երևանի քաղաքապետարանը պատրաստակամ է ամեն տարի նվազագույնը 2մլրդ դրամ ներդնել այս ծրագրին աջակցելու համար: Ես կարծում եմ այս տարի կամփոփենք այս բանակցությունները, բոլոր խնդիրները գույքագրված են: Այն ներդրումները, որ տարիներ առաջ պետք է արվեին՝ փաստացի չեն արվել շատ տարբեր պատճառներով, բայց այժմ պետք է քննարկենք, թե ինչ ենք անելու, որ ապագայում այդ խնդիրը չունենանք:

Արմեն Քոչարյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ. պարոն Ավինյան Դուք ասում եք, որ ինչ հարց վերաբերում է ինձ, ես հետևողական եմ լինում և աշխատում եմ վերջնական լուծում տալ: Երևանի ավագանու 25.06.2024թ. նիստի ընթացքում բարձրաձայնեցի, որ քաղաքացի Վալյա Սարգսյանը 2017 թվականից ի վեր չի կարողանում գնալ իր տուն: Դուք պատասխանել եք, որ որևէ տարածք չի կարող մնալ «կղզիացած», նույնիսկ սեփականության դեպքում, օրենքը հստակ կարգավորում է նման դեպքերը: Պատկան մարմինների հետ տեղի է ունեցել մի շարք հանդիպումներ, սակայն խնդիրն առայսօր լուծում չի ստացել:

Վերոգրյալի կապակցությամբ, դատարանի թիվ ՎԴ9019/05/17 վարչական գործով, նախատեսվող ճանապարհն անհնար է շահագործել, որի մասին բազմիցս պարզաբանել եմ:

Այդ ճանապարհի հարցով դիմել եմ ՀՀ կադաստրի կոմիտե և պարզաբանել են, որ այդ հողը գտնվում է Երևան համայնքի սեփականության տակ: Հարևանների կողմից միշտ խոչընդոտվել է այդ ճանապարհը և անցել է արդեն 4 ամիս՝ այդ խնդիրը լուծված չէ: Խնդիրը 6 տարվա վաղեմություն ունի, բայց 4 ամիս առաջ բարձրաձայնել եմ և Դուք հանձնարարել եք: Ես անձամբ Ձեզ եմ ուղղել իմ վերջին դիմումը և պատասխան չեմ ստացել, այլ ստացել

եմ մի պատասխան, որը վերաբերում էր այլ ճանապարհի: Իմ հարցը վերաբերում է համայնքային հող հանդիսացող ճանապարհին, որից կարող են օգտվել 3 ընտանիք և այնտեղ կարողանան մոտենալ շտապօգնության, հրշեջ ծառայության մեքենաները: Արդեն անցել է 4 ամիս այս խնդիրը լուծում չի ստացել, ուստի պահանջում եմ այս պահին հստակ հանձնարարական տալ խնդրի վերջնական լուծման համար: Ես Ձեզ կհանձնեմ ամբողջական փաթեթը:

Տիգրան Ավինյան

-Պարոն Քոչարյան, այո՛, ճիշտ եք, կա դատարանի որոշում: Հարցի վերաբերյալ տեղեկատվություն կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Քանի որ մենք մեր գործառույթն իրականացնում ենք փաստաթղթերի հիման վրա, փաստացի կասկածի տակ չեմ դնում մեր գործընկերոջ ասածը, կարող է խոչընդոտներ լինեն: Վարչական շրջանի ղեկավարի հետ կքննարկենք և լուծում կգտնենք:

Տիգրան Ավինյան

-Պարոն Մխիթարյան, դատարանի որոշումը կա, անկախ նրանից, որ հարկադիր կատարողն ասել է անհնարին է, ուսումնասիրեք և ներկայացրեք մանրամասները:

Ռոմիկ Մխիթարյան

-Ավագանու անդամների հետ միասին քննարկել ենք այս խնդիրը, մեր աշխատակազմի հետ տեղում ուսումնասիրել ենք, նաև տեխնիկա ենք տրամադրել, որպեսզի մաքրեն տարածքը: Այստեղ ամենակարևոր խնդիրն այն է, որ գլխավոր հատակագծում ճանապարհ չկա նշված:

Տիգրան Ավինյան

-Պարոն Մխիթարյան, խնդրում եմ քաղաքապետի խորհրդական Սոնա Թևանյանի հետ համատեղ, տեղում ուսումնասիրել խնդիրը և առաջիկա գործակարգավարական խորհրդակցության ժամանակ ներկայացնել տեղեկատվություն:

Եզրաքարերի վերաբերյալ հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Լևոն Հովհաննիսյան

-Այն փողոցում, որ նշեցիք, ինչպես նաև Ավան վարչական շրջանի մի շարք այլ փողոցներում, մասնավորապես՝ Բաբաջանյան փողոցում շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերի շրջանակներում իրականացվել են միջին նորոգման աշխատանքներ, այսինքն՝ ասֆալտի վերին 5սմ-անոց շերտի ամբողջական փոխարինում է տեղի ունեցել և շինարարության և բարեկարգման վարչությունը նախապես այս ծրագրերը վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի հետ համաձայնեցնում է և եզրաքարերի հիմնանորոգում և վերափոխումն իրականացնում է միայն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի միջոցներով: Սակայն հաջորդ տարվանից

նաև դիտարկվում է ճանապարհների մասով հիմնանորոգման ծրագրի մեկնարկը, ինչը, որ նախկինում երբեք չի արվել Երևանի քաղաքապետարանի կողմից:

Բոլոր խնդիրները ներառված է լինելու մեկ նախագծի մեջ, հիմնական խնդիրը գինն է, որովհետև եթե միջին նորոգման աշխատանքների ժամանակ 1քմ միջին արժեքը կազմում է մոտ 5000-6000 դրամ, ապա հիմնանորոգման մասով, նախնական հաշվարկներով, կախված ենթակառուցվածքների մաշվածությունից, գինն առնվազն 5-6 անգամ ավելի թանկ է լինելու: Մենք կապի մեջ ենք ՀՀ կառավարության հետ, նրանք բանակցություններ են վարում «Վեոլիա ջուր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և մյուս ընկերությունների հետ՝ իրենց ենթակառուցվածքները վերազինելու առումով:

Մենք հայտնել ենք, որ ուզում ենք կամաց-կամաց սկսել այնպիսի ծրագրեր, որոնք ներառելու են փողոցը, մայթը, եզրաքարը և տակի ենթակառուցվածքը, որը հաճախ վթարվելուց խնդիր է առաջացնում ասֆալտի ծածկույթի հետ:

Ընդհանուր առմամբ ուզում եմ նշել, որ այս տարի մենք ունենք դրական արձագանք և գնահատական բնակիչների կողմից, որովհետև միջին նորոգման ենք ենթարկել մոտ 50կմ ճանապարհ՝ բոլոր վարչական շրջաններում և նաև այն ճանապարհները, որտեղ միջին նորոգում է իրականացվել, նաև թերմոպլաստով գծանշում է կատարվել: Այս ծրագիրն ընդհանուր առմամբ բավականին հաջող է ստացվել: Եվս մեկ անգամ շեշտեմ, որ կարծում եմ հաջորդ տարի կմեկնարկենք հիմնանորոգման աշխատանքները:

Ինչ վերաբերում է կոնկրետ Ձեր կողմից նշած հասցեի եզրաքարերին, ապա կարելի է քննարկել վարչական շրջանի ղեկավարի հետ, եթե ինչ-որ փոքր հատվածի մասին է, իրականացնեն աշխատանքներ, եթե ունեն համապատասխան ծավալ տվյալ տարվա ծրագրով, ասֆալտբետոնյա ծածկը մենք կվերականգնենք:

Տիգրան Ավինյան

- Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Արմենակ Դանիելյան, խնդրեմ:

Արմենակ Դանիելյան

- Առաջին հարցը վերաբերում է Նորաշեն թաղամասին (16-րդ թաղամաս): Նորաշեն թաղամասում կան երեսունից ավել բարձրահարկ, պանելային շենքեր, որոնք կառուցվել են 1980-ական թվականներին: Այդ շենքերի արտաքին երեսպատման սալիկները ժամանակի ընթացքում թուլացել և թափվում են, որոնք առաջացնում են նյութական խնդիրներ՝ վնասվում են բակերում կայանված մեքենաները:

Տարիներ առաջ երեսպատման վնասված սալիկն ընկել էր և վնասել երեխային, որից հետո տեղադրել են ցանցային կոնստրուկցիաներ և ամրացրել սալիկները: Ցանցային կոնստրուկցիաների տեղադրումն արդյունավետ չէր: Շենքերն ունեն նաև վնասված միջպանելային հատվածներ, որոնց միջոցով անձրևաջրերը լցվում են բնակարաններ:

Առաջարկում եմ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեում նախատեսել գումար՝ այդ շենքերի արտաքին երեսպատման սալիկների ամրացման, ինչպես նաև վնասված միջպանելային հատվածների վերանորոգման աշխատանքները կատարելու համար:

Տիգրան Ավինյան

-Պարոն Դանիելյան, Ձեր կողմից բարձրացված հարցը վերաբերում է ոչ այնքան Երևանի քաղաքապետարանին, այլ գտնվում է համատիրության լիազորությունների և պատասխանատվության շրջանակում:

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է շատ կարևոր սկզբունք: Բազմաբնակարան շենքերի տանիքների, երեսպատման սալիկների վերանորոգման աշխատանքներ իրականացնելիս պետք է հասկանալ այդ գործընթացում համատիրության կողմից ինչպիսի աշխատանքներ կարելի է կատարել:

«Համատիրության մասին» օրենքի վերաբերյալ պատրաստել ենք ռեֆորմի փաթեթ և կոնցեպտուալ փոփոխում ենք ամբողջ ոլորտը:

Հաջողված համագործակցության դեպքեր ունենք համատիրությունների հետ:

Ձեր կողմից բարձրացված հարցադրումներն ամբողջությամբ գտնվում են համատիրության լիազորությունների շրջանակում:

Երևանի քաղաքապետարանը պատրաստակամ է աջակցել, բայց անհրաժեշտ է հասկանալ համատիրությունների կողմից իրականացվող աշխատանքը և կարծում եմ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմն այդ քննարկումը կկազմակերպի:

Արմենակ Դանիելյան

-Երկրորդ հարցը վերաբերում է միասնական տոմսային համակարգին:

Երևանի քաղաքապետարանի կողմից արվել է հայտարարություն՝ ս.թ. նոյեմբերի 1-ից քաղաքացիները պետք է հանրային տրանսպորտով երթևեկեն 100 դրամանոց մետաղադրամի առկայությամբ: Այսինքն՝ 100 դրամանոց մետաղադրամի փոխարեն այլ մետաղադրամի առկայության դեպքում քաղաքացիները չեն կարող օգտվել հանրային տրանսպորտից և նրանց շահերը ոտնահարվում են:

Ինչու՞ եք պարտադրում քաղաքացիներին հանրային տրանսպորտից օգտվելու համար ունենալ 100 դրամանոց մետաղադրամ:

Պետք է անդրադառնամ նաև TelCell սարքերի տեխնիկական վիճակին: Արձանագրվել է դեպք, երբ քաղաքացին այդ սարքի միջոցով կատարել է վճարում և կտրոն չի տրվել:

Ի՞նչ պետք է անել նմանատիպ և ինտերնետային կապի խափանման դեպքերում և ինչու՞ է որոշվել վճարումներն իրականացնել միայն TelCell սարքերի միջոցով, հնարավոր չէր արդյոք վճարումներն իրականացնել նաև այլ օպերատորների միջոցով:

Ես չեմ օգտվում TelCell վճարային համակարգից և վճարումներն իրականացնում եմ Idram դրամապանակի միջոցով և կարծում եմ, որ պարտադրվում է քաղաքացիներին վճարում իրականացնել միայն TelCell համակարգի միջոցով:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Վստահաբար գիտեմ, որ տեխնիկական խափանում լինելու դեպքում ուղևորը չի տուժում: Նույնիսկ տեխնիկական խափանման դեպքում քաղաքացին կարող է օգտվել հանրային տրանսպորտից:

Խնդրում եմ նշեք կոնկրետ դեպք, երբ քաղաքացին վճարել է և իրեն ծառայություն չի մատուցվել:

Վճարումները միայն TelCell սարքերի միջոցով իրականացնելու վերաբերյալ, տեղեկացնում եմ, որ եղել է մրցութային ընթացակարգ:

Դուք նշեցիք այն դրամապանակի անվանումը, որի միջոցով կատարում եք վճարումներ, պետք է հաշվի առնել, որ մեկ այլ քաղաքացի վճարումները կատարում է TelCell համակարգի միջոցով: Այսինքն, որևէ հավելվածի միջոցով վճարումներ չցանկանալ կատարելը պետք է ունենա տրամաբանական բացատրություն, որպեսզի օբյեկտիվ խնդիրների առկայության դեպքում դրանք լուծվեն:

Այսօր և 2025 թվականի հունվարի 1-ից TelCell համակարգից օգտվելու պարտադրանք չկա: Երևանի մետրոպոլիտենից օգտվելու պարագայում կարող եք տոմսը գնել դրամարկղից՝ QR կոդի միջոցով, ավտոբուսից օգտվելու դեպքում՝ կարող եք տոմսը գնել տերմինալից:

Կարծում եմ բազմաթիվ քաղաքացիների համար առավել հարմարավետ է տոմսերը ձեռք բերել էլեկտրոնային եղանակով:

Այլ պայմաններում, եթե համայնքը պետք է գումար ծախսի այդ համակարգը ներդնելու համար, ապա այդ գումարը ծախսում է մասնավոր կողմը և բնականաբար մասնավոր կողմը պետք է տրամաբանական շահ ունենա: Եթե համակարգը շահագործվում է համայնքի կողմից, որպես կանոն օպերատորին ստացված վճարումներից տալիս են տոկոս, որը մեր դեպքում բացակայում է: Այսինքն, յուրանքաչյուր ուղևոր վճարում է 100 դրամ, ապա այդ գումարը մուտքագրվում է «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության հաշիվ: Արդյունքում TelCell համակարգը, որպես օպերատոր գումար չի աշխատում:

Ինչ վերաբերում է ս.թ. նոյեմբերի 1-ից հասարակական տրանսպորտից օգտվելիս պարտադիր 100 դրամանոց մետաղադրամի առկայության պայմանին, պետք է նշեմ, որ պարտադրանք չկա, քաղաքացին կարող է տոմս գնել էլեկտրոնային տարբերակով կամ օգտվի բազմաթիվ տերմինալներից:

Տիգրան Ավինյան

-Ս.թ. նոյեմբերի 1-ից հասարակական տրանսպորտից օգտվելիս պարտադիր 100 դրամանոց մետաղադրամի առկայության պահանջը պայմանավորված է Ձեր կողմից բարձրաձայնված ստվերի մասին քննարկվող խոսակցություններից ելնելով: Ստվերը վերացնելու համար առաջին հերթին պետք է 100 դրամանոց մետաղադրամը գցել սարքերի մեջ կամ էլեկտրոնային համակարգով կատարել վճարումներ: Այսինքն, քաղաքացուն տրվել է երկու հնարավորություն: Այս ամենը ստվերի վերացման առաջին փուլն է:

Հաջորդ հարցը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Լուսինե Սարգսյան, խնդրեմ:

Լուսինե Սարգսյան

-Առաջին հարցս վերաբերում է առողջապահության ոլորտին, մասնավորապես՝ մանկական պոլիկլինիկաներում մասնագիտացված բժշկական ծառայությունների մատուցմանը:

Երևանում կան պոլիկլինիկաներ, որտեղ համապատասխան մասնագետները, այսինքն՝ նեղ մասնագիտական ծառայություններ մատուցող մասնագետներն աշխատանքի վայրում լինում են շաբաթը երկու անգամ և շատ կարճ ժամանակահատվածով, ինչն էապես նվազեցնում է մեր քաղաքացիների կողմից համապատասխան ծառայություն ստանալու հնարավորությունը:

Բացի այդ մենք գիտենք, որ Հայաստանի Հանրապետությունում մինչև 18 տարեկան անձանց անվճար բուժօգնության համար անհրաժեշտ են ուղեգրեր պոլիկլինիկաներից, ինչը ևս շատ խնդրահարույց է դառնում նման աշխատելաոճի պայմաններում: Ուզում եմ համապատասխան մեկնաբանություններ լսել՝ արդյոք այս հարցի հետ կապված որոշակի լուծումներ կան և համապատասխան վարչությունը զբաղվում է այս հարցով:

Երկրորդ հարցս հնչեցնեմ՝ մամուլից տեղեկացա, որ «Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում թեժ իրավիճակ է և աշակերտները դասադուլ են իրականացնում: Կխնդրեի ներկայացնել որոշակի տեղեկատվություն և մեկնաբանություն նշված իրադարձության և պատճառների վերաբերյալ:

Տիգրան Ավինյան

-Երկրորդ հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը:

Մարգարիտ Խաչատրյան

-Իրականում մամուլում շրջանառվող դրվագը դասադուլ չի կարելի համարել: Երեխաները տեսանյութում ներկայացված իրավիճակը ստեղծել են դասամիջոցին ու մի քանի րոպե դասապրոցեսից: Ընդհանուր առմամբ դասապրոցեսը նորմալ ընթացել է դպրոցում: Դա երեխաների նախաձեռնությունը չէր՝ ըստ ամենայնի: Պատճառն այն էր, որ դպրոցում նշանակվել է տնօրենի նոր ժամանակավոր պաշտոնակատար:

Տիգրան Ավինյան

-Տիկին Խաչատրյան ավելի մանրամասն ներկայացրեք, քանի որ դետալներն են կարևոր:

Մարգարիտ Խաչատրյան

-Մեկ տարի առաջ լրացել էր տնօրենի պաշտոնավարման ժամկետը՝ 65 տարին լրանալու հիմքով: Ինչպես մեծամասամբ բոլոր դեպքերում՝ պարտականությունները կատարող կամ ժամանակավոր պաշտոնակատար նշանակվում են դպրոցի աշխատակիցներ՝ ապահովելու սահուն, բնականոն ընթացք, մինչև ընտրված տնօրեն ունենալը: Այս դեպքում ևս դա արվել է, նշանակվել է տեղականներից մեկը, ով տարիքով մեծ է: Հաշվի առնելով նաև այս շրջանում չափորոշիչի ներդրմամբ պայմանավորված դժվարությունները, մշտապես, ամբողջ տարվա ընթացքում տիկին Մովսիսյանը դժվարություններ է ունեցել և մշտապես բողոքել է, որ չի հասցնում, չի կարողանում պարտականությունները պատշաճ կատարել:

Միևնույն ժամանակ, զուգահեռաբար ընթացել է մրցութային գործընթաց, որին եղել է հավակնորդ, ով զարգացման ծրագրի դրական եզրակացություն է ունեցել, սակայն 3 անգամ հարցազրույցի փուլը չի հաղթահարել, բայց մենք օգնելով դպրոցին շարունակել ենք գործընթացը մինչև կունենանք ընտրված տնօրեն:

Սակայն ս.թ. հոկտեմբերի 10-ին դպրոցում տեղի է ունեցել իրադարձություն՝ դասի ժամանակ ձերբակալվել է ուսուցիչ և համադրելով այս բոլոր իրավիճակներն անհրաժեշտություն է առաջացել դրսից նշանակելու տնօրենի նոր ժամանակավոր պաշտոնակատար:

Տիգրան Ավինյան

-Առաջին հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանը:

Դավիթ Կարապետյան

-Այո՛, մանկական առողջության կենտրոններում ունենք նմանատիպ խնդիր, բայց այդ խնդիրը կարգավորվում է ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանված համապատասխան չափորոշիչով, այսինքն՝ ըստ բնակչության թվի: Առողջապահության վարչությունը կարող է նույնիսկ տեղեկանքով ներկայացնել, որ այս վերջին մեկ տարում կադրային համալրվածությունը հասցվել է գրեթե 100 տոկոսի:

Մեր բժշկական կենտրոնների համապատասխան մասնագետներին մշտապես գործուղում ենք առաջնային օղակ, որպեսզի կարողանանք թեկուզև շաբաթը երկու անգամ, բայց տվյալ մասնագետի ներկայությունն ապահովենք: Ինչ վերաբերում է 0-18 տարեկանների ուղեգրերին, դրանք անսահմանափակ քանակով տալիս ենք, ինչպես ՀՀ առողջապահության նախարարությունն է հնարավորություն ընձեռում: Այլ հարց է, երբ այդ ուղեգրերով գնում են տարբեր մասնավոր հիմնարկներ, որտեղ փորձում են այդ

պետպատվերի ուղեգրերը չվերցնել, որովհետև իրենք ունեն ծառայություններ, որոնք վճարովի են:

Տիգրան Ավինյան

-Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյան, խնդրեմ:

Մանուկ Սուքիասյան

-Առաջին հարցը վերաբերում է «Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին: Կանխակալ կարծիք է, որ եթե դպրոցի տնօրենի հավակնորդի մայրը եղել է դպրոցի նախկին տնօրենը, ապա նա օբյեկտիվորեն չի կարող նշանակվել այդ պաշտոնում: Հնարավոր է նա ռեալ տիրապետում է չափորոշիչներին և նրա կողմից ներկայացված զարգացման ծրագիրը երեք անգամ ընդունվել է: Այլ հավակնորդներ չեն եղել, բայց նա տնօրենի պաշտոնում չի նշանակվել: Մեզ տեղեկացրել են, որ նման իրավիճակ առկա է նաև թվով 20-40 դպրոցում: Արդյոք դպրոցում չկա չափորոշիչներին համապատասխանող անձ, ով կարող է նշանակվել դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

Խնդրում եմ ներկայացնել Ձեր պարզաբանումները.

Տիգրան Ավինյան

-Ոչ ոք չի բացառում, որ նախկին տարիներին դպրոցում պաշտոնավարած սիրելի տնօրենի դուստրը համապատասխանում է չափորոշիչներին, հավակնում է այդ պաշտոնում նշանակմանը և քննությունները հանձնելուց հետո ստանում է ծրագրի դրական եզրակացությունը, անցնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ իրականցվող բոլոր փուլերը:

Պետք է նշեմ, որևէ բացառություն չկա: Եթե բազմամարդ խորհրդում անձը չի կարողացել անցնել հարցազրույցի փուլը, որտեղ ներգրվված են տարբեր մարմիններ և յուրաքանչյուրը ներկայացնում է տվյալ մարմնի դիրքորոշումը, ուստի տրամաբանական է, որ չի կարող նշանակվել դպրոցի տնօրենի պաշտոնում:

Տեղեկացնում եմ, որ ներկայումս դպրոցի տնօրենի ժամակավոր պաշտոնակատար նշանակված անձին չեմ ճանաչում:

Մանուկ Սուքիասյան

Երկրորդ հարցը. Երևանից օրական մոտ 400 հազ. մ^3 կեղտաջուր լցվում է շրջակա միջավայր և օգտագործվում է որպես ոռոգման ջուր: «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման նոր կայանի կառուցումն արժեցել է 10,4 մլն. եվրո: Այն 5 տարուց ավելի է չի գործում: Կայանը չունի ավարտական ակտ և պետական գրանցում, այն ոչ ոքի չի պատկանում: Ջրային կոմիտեն և «Վեոլիա ջուր» ընկերությունը կայանի տարեկան սպասարկման վճարի շուրջ համաձայնության չեն եկել: Նոր կայանի չշահագործման վերաբերյալ հարուցված քրեական գործը կասեցվել է, մեղադրյալի անձը պարզված չէ: Սա միջպետական վարկ է, որը պետությունը բյուջեից շարունակում է վճարել: Կայանի չշահագործման պատճառով

հիմա առաջացել է նոր ներդրումների կարիք: Ինչպես մատնացույց արեցի Երևանից օրական մոտ 400 հազ. մ^3 կեղտաջուր լցվում է շրջակա միջավայր:

Ի՞նչ հետազոտություն, ի՞նչ գնահատական և ի՞նչ պլաններ կան այս ամենի հետ կապված:

Տիգրան Ավինյան

-Ձեր կողմից բարձրաձայնած տվյալ հարցի վերաբերյալ կարող եմ ասել, որ ՀՀ կառավարության և «Վեոլիա ջուր» ընկերության միջև բանակցությունների առաջնային կետերից մեկը «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման նոր կայանի գործարկումն է:

Երևանի քաղաքապետարանն իր լիազորությունների շրջանակում պատրաստակամություն է հայտնել աջակցել՝ իր բոլոր միջոցներով:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սուսաննա Մելիքյան, խնդրեմ:

Սուսաննա Մելիքյան

-Առաջին հարցը վերաբերում է Նազարբեկյան թաղամասի հ.48 բազմաբնակարան շենքին, իմ տեղեկությամբ Դուք ծանոթ եք այդ շենքին: Փաստորեն մինչև օրս այդտեղ չկա վերելակ՝ այն պարագայում, երբ ընթանում են վերելակների արդիականացման ծավալուն աշխատանքներ: Ձեր նախընտրական քարոզարշավի ժամանակ Ձեր հանձնարարությամբ վերանորոգվել է այդ շենքի տանիքը: Ի՞նչն է խնդիրը, որ երկրորդ կարևոր հիմնահարցը չի լուծվել այն ժամանակ կամ մինչ օրս: Կա՞ն այլ բազմաբնակարան շենքեր, որտեղ չկան վերելակներ:

Տիգրան Ավինյան

-Երևանի քաղաքապետարանը 2024թ. 500 վերելակ է փոխարինում Երևան քաղաքում՝ քաղաքի բյուջեի հաշվին: Դա չի արվում որևէ նախընտրական տրամաբանությամբ, ինչպես նախկինում որևէ աշխատանք նախընտրական տրամաբանությամբ չի արվել: Նախընտրական շրջանում տրվել են այն խոստումները, որոնք մենք իրականացնելու ենք գալիք 5 տարվա ընթացքում: Այդ խոստումները վերածվել են ծրագրի: Նազարբեկյան թաղամասի հ.48 հասցեի մասին տեղեկատվություն կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը:

Արսեն Կարոյան

-Պարոն քաղաքապետ, Նազարբեկյան թաղամասի հ.48 շենքի վերելակն այս տարի փոխարինման ենթակա չէ: Դա կուսումասիրվի հետագա տարիներին փոխարինման ծրագրի շրջանակներում: Կան փոքրիկ տեխնիկական խնդիրներ՝ վերելակային սրահների և հորանների տեղադրման, որոնք պետք է շտկվի:

Տիգրան Ավինյան

-Պարզաբանումներ կներկայացնի նաև Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Գրիգոր Գասպարյանը:

Գրիգոր Գասպարյան

-Պարոն քաղաքապետ, այդ շենքն ամբողջությամբ կառուցված չէր, վերջին հարկը չկար: Բնակիչներն իրենց ուժերով կառուցել են և վերևում տեղ չեն թողել այդ վերելակի սպասարկման համար:

Տիգրան Ավինյան

-Նազարբեկյան թաղամասի հ.48 շենքի հետ կապված հանձնարարվում է քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանին, քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ Սամվել Ղուկասյանին ուսումնասիրել և 2025թ. ծրագրի շրջանակներում ձեռնարկել համապատասխան միջոցներ նախագիծը վերահամաձայնեցնելու, հաստատելու, շինարարական աշխատանքներն իրականացնելու, ավարտական ակտ տրամադրելու ուղղությամբ, այնուհետև վերելակի տեղադրման հարցը դիտարկելու համար:

Սուսաննա Մելիքյան

-Երկրորդ հարցը վերաբերում է բակերի բարեկարգման խնդրին, որն ընթանում է շատ հաճախ քաղաքային իշխանությունների և բնակիչների ընդհարումներով: Տպավորություն է ստեղծվում, թե նպատակը ոչ այնքան իրականում բարեկարգելն է, որքան, որ բյուջեով նախատեսված գումարները ծախսելը, կամ ինչ-ինչ մասնավոր շահեր սպասարկելը:

Վերջին օրերին մենք եղել ենք Վարդանանց փողոցի հ.10 հասցեի բակում և այնտեղ այն իրավիճակն էր, որ փաստացի քանդել էին նոր, վերջին տարիներին բարեկարգած բակը և ընդհանրապես բարեկարգման կարիք չունեցող խաղահրապարակ: Այսինքն մարդիկ այդտեղ խնդիր չէին տեսել և բնակիչների կամքին հակառակ այնտեղ քանդել էին: Բնակիչները նույնիսկ ստորագրություն են հավաքել որոշ ժամանակ առաջ և ասել, որ իրենք անհրաժեշտության դեպքում կնորոգեն, կթարմացնեն խաղահրապարակը: Սակայն իրենք ունեն շատ լուրջ մտավախություն՝ կարծում են, որ պետք է փոքրացվի խաղահրապարակի տարածքը և այդ բարեկարգման արդյունքում տեղ ազատվի, ասֆալտապատվի՝ մեքենաներ կայանելու համար, կա նաև անհանգստություն, որ կարող է ապօրինի շինթույլտվություն լինի և իրենց շենքի բակում ևս մի շինություն կառուցվի: Ինչպես ասում են՝ «Աչքը տեսածից է վախենում», մի քանի օր առաջ այդ նույն շենքի բակում բացումն է եղել մի մեծ խանութի և մարդիկ մտահոգված են: Իրենք անակնկալի են եկել, քանի որ տեղյակ չեն եղել, թե ինչպես է իրենց բակի փոքրիկ կաթսայատունը վերածվել այդպիսի մեծ խանութի:

Դուք ինչպե՞ս կարող եք հավաստիացնել կամ փարատել այդ մարդկանց անհանգստությունը, որովհետև իրենք այնքան անվստահություն ունեն և՛ ներկայիս իշխանությունների, և՛ գուցե քաղաքային ծառայությունների նկատմամբ, որ արդեն փաստաթուղթն էլ իրենց չի բավարարում: Չեն վստահում թղթին՝ ասում են թղթի վրա մի բան է գրված, բայց հնարավոր է ուրիշ աշխատանք է իրականացվելու:

Տիգրան Ավինյան

-2022թ. սեպտեմբերի 27-ից ես նշանակվել եմ Երևանի փոխքաղաքապետ, նախորդ տարվա հոկտեմբերից ես Երևանի քաղաքապետն եմ: Խնդրում եմ գեթ մեկ դեպք ինձ մատնանշեք, երբ Երևանի քաղաքապետարանն իրականացրել է բակում ծրագիր և այդ ծրագիրը վերածվել է շենքի շինարարության: Դուք այդպիսի դեպք չեք գտնի: Հակառակը՝ Դուք կտեսնեք հարյուրավոր բակերի բարեկարգումներ, շատ դեպքերում «պատերազմներով» ուղղորդվող, որովհետև մարդ կա իր փոքր անձնական շահը, իր ավտոտնակի կամ այլ, գերադասում է հանրային շահից: Շատ դեպքերում հեքիաթի է նմանվում անվստահությունը մեր ծրագրերի նկատմամբ:

Ես չեմ հավատում, որ Երևան քաղաքում կա մարդ, ով տեսնելով, որ քաղաքապետարանը բակային բարեկարգման ծրագիր է իրականացնում, մտածի, որ այդտեղ շենք են կառուցելու: Սա կոնկրետ որևէ մեկի ավտոտնակի հարցն է: Մանրամասներ կներկայացնի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Նիկոլայ Սարիբեկյանը:

Նիկոլայ Սարիբեկյան

-Տպագրիչների փողոցի հ.7 հասցեում ցանկանում էինք բարեկարգում կատարել, մոտեցել էինք բնակիչներին: Ամբողջ շենքի բնակիչներն ասում էին, խնդրում ենք դուրս եկեք մեր բակից, մենք չենք ուզում, որ Դուք գումար ծախսեք, բարեկարգեք, գնացեք հարևան բակը բարեկարգեք: Ուսումնասիրության արդյունքում պարզեցինք, որ տվյալ բակի ավտոտնակների տերերը բնակիչների մի մասին ահաբեկել էին, մյուս մասին՝ համոզել:

Տիգրան Ավինյան

-Չեն ուզում, չենք անելու: Աշխատանքներ կիրականացնենք մյուս վարչական շրջաններում:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գևորգ Ստեփանյան, խնդրեմ:

Գևորգ Ստեփանյան

-Ակնկալում եմ հարցիս հստակ պարզ պատասխան՝ Դուք խորշում ե՞ք արտահերթ ընտրություններ անցկացնելու Ձեր իսկ հնչեցրած գաղափարից, այո՛ կամ ո՛չ:

Տիգրան Ավինյան

-Իհարկե ոչ:

Գևորգ Ստեփանյան

-Իսկ ե՞րբ սպասենք այդ գաղափարով արտահերթ ավագանու նիստի օրակարգին:

Տիգրան Ավինյան

-Երբ որ տվյալ օրակարգի վերաբերյալ լինի հանրային պահանջ և հանրային համաձայնություն նվազագույնն այս դահլիճի շրջանակներում:

Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հակոբյան, խնդրեմ:

Սամվել Հակոբյան

-Առաջին հարցը վերաբերում է Ամիրյան փողոցի փոխարինված ասֆալտին: Ամբողջական նորոգումից հետո, 20 օրից ավել փողոցում գծանշում չի կատարվել: Այդ փողոցի վրա կա առնվազն երկու հետիոտնային անցում, որոնք չեն կարգավորվում լուսացույցով: Ի՞նչն է պատճառը, որ այդ հսկայական աշխատանքից հետո գծանշում անելը պահանջում է գրեթե մեկ ամիս:

Տիգրան Ավինյան

-Պարոն Հակոբյան ասֆալտապատումից հետո ասֆալտը մոտավորապես 2-4 շաբաթ հետո է ավարտական տեսք ստանում, այդ ընթացքում սև հետքեր են հայտնվում ասֆալտի վրա: Դրա կանխարգելման ձևերը կան, սակայն այնքան թանկ են, որ ավելի լավ է այդ 2-4 շաբաթը սպասել, որպեսզի թանկ թերմոպլաստով գծանշում իրականացնելուց հետո, այն չվնասվի: Խնդիրը կայանում է նրանում, որ եթե շուտ իրականացնենք գծանշումը, այն շատ արագ կսևանա: Սա է միակ պատճառը:

Սամվել Հակոբյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ. կարմիր գծերի վերաբերյալ. Դուք կատարեցիք ոչ պոպուլյար Ձեր ռեֆորմը՝ գրեթե 13 անգամ թանկացրեցիք, «Մայր Հայաստան» խմբակցությունն այդ կապակցությամբ դիմել է վարչական դատարան, 3 օրից՝ ս.թ. հոկտեմբերի 18-ին կունենանք վճիռ, մեր պահանջն է՝ տվյալ թանկացումը ճանաչել ոչ իրավաչափ:

Այդ պահից սկսած ի՞նչ բարեփոխում է տեղի ունեցել ավտոկայանատեղիների ոլորտում և ինչքանո՞վ է արդարացի, որ քաղաքացիներն այն ժամանակ վճարում էին 12.000 դրամ, իսկ այժմ՝ 160.000 դրամ, բայց եթե քաղաքացին Սայաթ-Նովայի պողոտայի վրա գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակի դիմաց կանգ է առել այն օրը, երբ Նիկոլ Փաշինյանը գալու է այդտեղ, տվյալ քաղաքացին, ով հսկայական գումար է վճարել ավագանու որոշմանը համապատասխան կայանում կատարելու համար, նրա մեքենան էվակուատորները՝ բավական կոպիտ ձևով տարհանում են, ուրիշ տեղ են կանգնեցնում: Ի՞նչ եք կարծում սա արդյոք համապատասխան ծառայություն է, որը թանկացել է 13 անգամ:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Սուրեն Գրիգորյան

-Բովանդակային առումով մենք ունենք ծրագիր, որն իրականացնում ենք, որպեսզի համապատասխան բջջային հավելված լինի ավտոկայանատեղիներից օգտվելու համար, որը շատ քաղաքակիրթ մոտեցում է և վաղուց շատ քաղաքներում ընդունված է: Իհարկե հաղորդագրություն ուղարկելու տարբերակն ամեն դեպքում պահպանելու ենք այն

քաղաքացիների համար, ովքեր հին մոդելի հեռախոսներ են օգտագործում և հավելվածը ներբեռնելու հնարավորություն չունեն:

Հարցադրման վերջի մասով՝ ասեմ, պարոն Հակոբյան՝ ես չեմ պատկերացնում, թե ինչպես կարելի է փոխկապակցել որևիցե երկրի ղեկավարի անվտանգային միջոցառումներն ավտոկայանատեղիի գնի հետ:

Տիգրան Ավինյան

- Հաջորդ հարցը՝ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հարոյան, խնդրեմ:

Սամվել Հարոյան

- Երևան քաղաքում աղմուկի կառավարումը կազմակերպելու համար ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվում:

Շատ երկրներում ընդունված է աղմուկի կառավարումն իրականացնել տարբեր պատժամիջոցներով և համոզված եմ, որ Երևանը ևս նման կառավարման պահանջ ունի:

Տիգրան Ավինյան

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

Տարոն Մարգարյան

-Պարոն Հարոյան, մեր կողմից առաջարկվել է կարգավորում, որպեսզի աղմուկի կառավարման համար Երևան քաղաքի ավագանին իրավունք ունենա սահմանել լրացուցիչ պահանջներ և սահմանափակումներ:

Սահմափակումները Երևան քաղաքի համար միատեսակ չեն լինելու, այլ լինելու են ըստ հասցեների: Այսինքն, Երևան քաղաքի ավագանին յուրաքանչյուր առանձին հատվածի համար կարողանալու է սահմանել թե՛ ժամային սահմանափակում, և թե՛ թույլատրված դեցիբելի սահմանափակում: Այս ամենը վերաբերում է դեռ նախագծին, և արվում է ամեն ինչ, որպեսզի նախագիծը շուտ ընդունվի:

Այս պահին առկա միակ օրենսդրական կարգավորումը դա լռության ժամի պահպանումն է և պատասխանատվության ենթարկող մարմինը Երևանի քաղաքապետարանը չէ:

Նախագիծը բավականին ծավալուն է՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքը շարադրվում է նոր խմբագրությամբ և հարակից 29 օրենքում կատարվում է փոփոխություններ: Փոփոխություններն առնչվում են մեր գործունեության համարյա բոլոր բնագավառներին, ուստի գրեթե բոլոր նախարարությունների և պետական կառույցների հետ քննարկման անհրաժեշտություն կա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծի ընդունման հստակ ժամկետ չեմ կարող նշել: Կարող եմ ասել, որ Երևանի քաղաքապետի և քաղաքապետարանի աշխատակազմի կողմից հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկվում են նախագիծն այս տարի ընդունելու համար:

Սամվել Հարոյան

-Երկրորդ հարցը վերաբերում է Երևան քաղաքի 2024թ. տոնակատարություններին նվիրված 16 երգի համար նախատեսված 70,000,000 ՀՀ դրամին:

Նշեմ Երևան քաղաքի օրվա համար 16 երգի ստեղծման վերաբերյալ ներկայացված նախահաշվի 6-րդ և 7-րդ կետերը՝ 4,500,000 ՀՀ դրամ երգի ստեղծման և 15,000,000 ՀՀ դրամ տեսահոլովակ ստեղծելու համար:

Ես հանդիսանում եմ մշակույթի գործիչ և լավ պատկերացնում եմ այս թվերը:

Ի՞նչ չափորոշիչներով են ընտրվել այս երգերը, որոնցից մեծ մասը կարելի է ասել կապ չունեն Երևան քաղաքի տոնախմբությունների հետ և ինչպե՞ս են հաշվարկվել այս թվերը:

Ընդգծեմ, որ ունենք մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով, որում ընդգրկված են անձինք, ովքեր տիրապետում են այս խնդիրներին և մենք ևս կարող ենք ներգավվել այս գործընթացին:

Առաջարկում եմ ստեղծել գեղարվեստական խորհուրդ, որպեսզի հետագայում նման փաստեր չարձանագրվեն:

Նշված է նաև, որ 9,000,000 ՀՀ դրամ տրվել է երգիչներին: Ինչպե՞ս կարելի է Երևանի տոնակատարությունների համար երգել այսպիսի ահռելի գումարներով, այլ պետք է երգել մեր սիրելի Երևանը ծաղկացնելու համար:

Երգերի իրավունքների վճարներ հեղինակներին նախատեսվել է 2,250,000 ՀՀ դրամ: Ես երջանիկ կլինեի իմ հեղինակած երգը կատարվեր Երևան քաղաքի օրվա համար և բնականաբար առանց որևէ գումար ակնկալելով:

Ովքե՞ր և ի՞նչ չափորոշիչներով են ընտրել այս երգերը և ինչպե՞ս են հաշվարկվել այս թվերը:

Տիգրան Ավինյան

-Վերջին երկու տարվա մշակութային միջոցառումների և՛ կազմակերպիչների, և՛ երգիչների, և՛ երգահանների, և՛ նվագախմբերի, և՛ արտիստների շրջանակը շատ մեծ է: «Էրեբունի-Երևան» տոնակատարության շրջանակում 49 պայմանագիր է կնքվել տարբեր անձանց, կազմակերպիչների, երգիչների և խմբերի հետ: Կոնկրետ դեպքում, եթե կա շուկայական գներից տարբերություն, ապա կուսումնասիրենք:

Երևան քաղաքի 2024թ. տոնակատարություններին նվիրված 16 երգի համար նախատեսված 70,000,000 ՀՀ դրամի վերաբերյալ նշեմ, որ առաջարկը ներկայացնող ընկերության հետ համատեղ ջանքերով ընտրվել է երգերի շրջանակ: Ծրագիրը դեռ ամբողջովին ավարտին չի հասել: Միգուցե հնարավոր է մեկ, երկու դեպքում շուկայական գինը կարող էր ավելի նվազ լինել:

Պետք է հասկանալ, որ այս մշակութային միջոցառումների առանձնահատկությունն այնպիսին է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից թելադրվում է որոշակի քաղաքականություն և ճաշակ: Այսինքն, Երևանի քաղաքապետարանը որոշակի ուղղվածության մշակութային միջոցառումներին տալիս է առավելություն, օրինակ՝

դասական երաժշտությանը: Ունենք բազմաթիվ միջոցառումներ նվիրված դասական երաժշտությանը, օրինակ՝ Երևան քաղաքում բացօթյա 2 փառատոն:

Կարծում եմ շատ կարևոր է ի՞նչ քաղաքականություն է վարում Երևանի քաղաքապետարանը և ինչպիսի՞ մշակութային ապագա է նախանշում: Այս գործընթացում ահռելի մեծ է փոփոխությունը նախկինում իրականացված ծրագրի համեմատությամբ: Եթե կան նմանատիպ քննադատական խոսքեր, որոնք չի բացառվում կարող է նույնիսկ տեղին լինեն, կընդունենք ի գիտություն և հաջորդ անգամ առավել ուշադիր կլինենք:

Պարոն Հարոյան, ներկայացնեմ ինչ է իրականացվել Էրեբունի-Երևանի 2806-ամյակի տոնակատարությունների միջոցառումների շրջանակում.

Կարծում եմ Էրեբունի-Երևանի 2806-ամյակին նվիրված տոնակատարությունների շրջանակում բոլոր տեսակի նախասիրությունների մարդկանց համար համապատասխան միջավայր և միջոցառում նախատեսված էր: Կազմակերպվել էր և՛ դասական, և՛ էստրադային, և՛ ջազային, և՛ ռոքային համերգներ: Կազմակերպվել էր փառատոներ և ժողովրդական երաժշտության ֆլեշմոբ: Ֆլեշմոբը տեղափոխվում էր Երևան քաղաքի տարբեր հատվածներ և ստեղծում էր պարային միջավայր: Հանրապետության հրապարակում տեղի է ունեցել 1990-ականների և 2000-ականների երգերից կազմված համերգ:

Այս տարի քննարկվել և որոշվել է այս ֆորմատը, որի հիմքում եղել է հետևյալը. քանի որ միջոցառումների պլանավորման ժամանակը բավականին սուղ էր, որոշվել է Երևան քաղաքում տարվա ընթացքում սիրված փառատոները և միջոցառումները ընդգրկել մեկ օրվա միջոցառումների ցանկում: Կարծում եմ միջոցառումները ստացված են:

Պարոն Հարոյան, Ձեր կողմից բարձրաձայնված բոլոր տեսակետներն ընդունվեցին ի գիտություն:

Հաջորդ հարցը՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Տիգրան Պետրոսյան, խնդրեմ:

Տիգրան Պետրոսյան

-Պարոն Ավինյան, Դուք ասացիք, որ բազմաբնակարան շենքերի քաղաքաշինական նախագծերի վերաբերյալ որոշումներ ընդունելու համար գործում է խորհուրդ՝ բաղկացած հինգ անձից:

Առաջին հարցս հետևյալն է. իմ կարծիքով հինգ հոգին բավարար չէ այնպիսի քաղաքի՝ ինչպիսին Երևանն է, համապարփակ զարգացումը, անվտանգությունը, որակը խորությամբ ուսումնասիրելու համար: Որևիցե ձևով կասկածի տակ չդնելով խորհրդի անդամների մասնագիտական հմտությունները և գիտելիքները, այնուամենայնիվ կարծում եմ, որ հինգ հոգին բավարար չէ:

Թե ինչու՞ է պարբերաբար հարցեր բարձրաձայնվում՝ որովհետև այդ որոշումները կայացնելու գործընթացի թափանցիկություն չկա, մարդիկ չգիտեն որոշումներն ինչպես են կայացվում, ինչ հարցեր են քննարկվում: Չե՞ք կարծում, որ կարելի է ուղիղ հեռարձակում

ապահովել, որպեսզի բնակիչներն հնարավորություն ունենան տեսնելու, թե ինչպես են այդ որոշումներն ընդունվում, ինչ հարցեր են քննարկվում:

Առաջարկվում է ստեղծել նաև մշակութային գործիչների հանձնաժողով, ովքեր տարվա ընթացքում նախատեսված միջոցառումների վերաբերյալ կկարողանան եզրակացություն տալ, մասնակցել որոշումների ընդունմանը: Օրինակ՝ Անգլիայի բալետի ներկայացումները, որ վերջին շրջանում կազմակերպվեց: Մի մասը կասի, որ շատ կարևոր է այդպիսի որակի միջոցառումներ լինեն, մյուս մասը կարող է պնդել, որ 500 միլիոնից ավել գումար ենք ծախսել Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում երեք ներկայացման համար, որին մասնակցել է 5000 մարդ: Այսպիսի հարցերը պետք է քննարկվեն նաև այդ ոլորտի մասնագետների հետ, որպեսզի ընդունված որոշման որակը բարելավվի:

Տիգրան Ավինյան

-Պարոն Պետրոսյան, նախ ուզում եմ ասել, որ նախևառաջ հինգ հոգի ճարտարապետ չեն, մենք ունենք երկու համապատասխան վարչություն, ովքեր իրականացնում են տեխնիկական ամբողջական այդ աշխատանքը: Այս հինգ ճարտարապետը փաստացի մեզ մոտ, կարելի է ասել, գլխավոր ճարտարապետի ինստիտուտի դերն են ստանձնել: Յուրաքանչյուր շաբաթ հանդիպում է կայանում՝ կախված ծանրաբեռնվածությունից:

Թե ինչու՞ է հինգ հոգի և ոչ քսան, որպեսզի իրականում այս դինամիկան նորմալ պահպանվի, որովհետև սա շաբաթական աշխատանք է և այդ հինգ հոգին այն մարդիկ են, ովքեր գիտեն, որ տվյալ ժամանակահատվածում իրենք աշխատանքի այսպիսի պարտականություն ունեն և վեց ամիսը մեկ նրանցից մեկը փոխարինվում է որևէ մեկ այլ ճարտարապետով, ով փաստացի իրականացնում է նախագծեր Երևան քաղաքում:

Ներկայացնեմ, թե ինչ կանոններ կան այս խորհրդում: Ճարտարապետներն իրենց իսկ նախագծերը քննարկելիս, շահերի բախման հիմքով, դահլիճից դուրս են գալիս: Այսինքն՝ մնացած բոլորն ավելի ազատ են և անկաշկանդ, երբ նույնիսկ իրենց գործընկերոջ նախագիծն են քննարկում: Նույնիսկ գործող ճարտարապետների խմբում ներգրավված մարդկանց կողմից առաջարկված շատ նախագծեր մերժվել են: Ընդհանուր առմամբ այս մեխանիկան կարելի է բարելավել, կարելի է որոշակի ճշգրտումներ նաև մտցնել այստեղ, բայց ուզում եմ ասել, որ որոշակի միջազգային փորձերի ուսումնասիրության արդյունքում է իրականացվել այս ամենը:

Ինչ վերաբերում է գեղարվեստական խորհրդին, առաջին հերթին խորհրդի պատասխանատվության շրջանակները վերաբերում են որոշ բացառություններին, օրինակ՝ գովազդի առումով կամ մեկ այլ չափորիշիչների չի համապատասխանում, բայց ընդհանուր առմամբ վատ բան չի, մեր կանոններից դուրս լավ բան է, գեղարվեստական խորհուրդն ունի հնարավորություն այն իրականացնելու: Գեղարվեստական խորուրդը դեռևս մշակութային միջոցառումների ծրագրեր և նախագծեր չի քննարկել:

Անդրադառնամ Ձեր բարձրաձայնած միջոցառմանը: Արդյոք ճիշտ էր Անգլիայի բալետին հրավիրելը, թե ոչ: Շատ լեգիտիմ հարց է, որովհետև տեղի է ունեցել երեք ներկայացում և երեք անգամ են մարդիկ ունեցել հնարավորություն տեսնելու այդ գեղեցկությունը: Ի՞նչ է մեզ տալիս նմանատիպ նախագծերի իրականացումը: Համագործակցության շրջանակը կտրուկ սկսվում է ընդլայնվել, մասնավորապես՝ բացօթյա համերգներին մենք չենք հրավիրում միջազգային պարային խմբեր, նվագախմբերն իրենք են հայտ ներկայացնում՝ հաջորդ տարվա միջոցառումներին իրենց մասնակցության համար:

Ի՞նչ է տվել Անգլիայի բալետի հետ համագործակցությունը: Այս մակարդակի ծրագրերը, որ իրականացվում են՝ բացի նրանից, որ ուրիշներն են սկսում գալ Երևան, այլև կարծում ենք, որ հաջորդիվ հետաքրքիր համագործակցության անակնկալներ ենք ունենալու, որն արդեն վերաբերելու է հայկական մշակութային ժառանգությանը:

Ավարտվեց հարց ու պատասխանը:

Ավագանու հարգելի՛ անդամներ, հարգելի՛ գործընկերներ, Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմող՝
Կազմակերպական վարչություն